Azg
Ազգ
11 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2006, ՇԱԲԱԹ, ԹԻՎ 193 (3596)

Ֆրանսիական օրինագիծը դատապարտում է նաեւ Պոլսո հայոց պատրիարքը

Երեկ հաղորդագրությամբ «Հայոց ցեղասպանության ուրացման» համար պատիժ նախատեսող ֆրանսիական օրինագիծը դատապարտել է Կ. Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մութաֆյանը: Այդ մասին ինտերնետային էջում տեղեկացրել են «CNN-Turk»-ը, թուրքական թերթերը՝ «Միլիեթի» գլխավորությամբ:

Հաղորդագրության մեջ ամենապատիվ պատրիարքն ասում է. «Պետք է առաջնորդվել երկխոսությանն ու փոխըմբռնմանը նպաստող նախաձեռնություններով: Մեզ համար չի կարող ընդունելի լինել այս նպատակին չծառայող ոչ մի ձեռնարկում: Ինչպիսի փաստարկներ էլ ունենան, անհատի խոսքի ազատությունը սահմանափակող բոլոր նախաձեռնությունները հարված են հասցնելու թուրք եւ հայ հասարակությունների երկխոսությանը եւ երկու կողմերում էլ խրախուսելու են ազգայնամոլ տարրերի հզորացմանը»:

Մութաֆյան պատրիարքը նախազգուշացրել է, որ այդ օրինագիծը կխզի երկու հասարակությունների առանց այդ էլ սահմանափակ երկխոսությունը:

Հ. Ղ.

ՎԱՃԱՌՔ

«Արմենտելի» վաճառքը կայացել է, ինտերնետն ազատվել է նրա մենաշնորհից

Նոր սեփականատերը ETISALAT ընկերությունն է

Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտի մենաշնորհատեր «Արմենտելի» վաճառքի վերաբերյալ նախօրեին տեղեկություններ էին տարածվել, որ ընկերությունը 600 մլն դոլարով ձեռք է բերել արաբական Emirates Telecommunications Corporation (ETISALAT) Emergent Telekom Ventures (ETV) կոնսորցիումը: Մյուս կողմից, «Արմենտելի» ձեռքբերմանը հավակնող մեկ այլ ընկերության՝ ռուսական MTC-ի պաշտոնական ներկայացուցիչները ասելիքներ էին համարել այդ լուրերը, վստահություն հայտնելով, որ իրենք են «Արմենտելի» վաճառքի համար հայտարարված միջազգային մրցույթի հաղթողը:

Այս լուրերի առնչությամբ վստահելի աղբյուրներից տեղեկացանք, որ «Արմենտելի» վաճառքն արդեն կայացած փաստ է, եւ այն ձեռք է բերել արաբական ընկերությունը: Սակայն առավել ուրախալի փաստն այստեղ այն է, որ գնորդը կամավոր հրաժարվել է ինտերնետի մենաշնորհից: Նույն աղբյուրի հաղորդմամբ, վերջերս տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացման համար, որի հիմնական խոչընդոտը այս ոլորտում «Արմենտելի» ունեցած մենաշնորհն էր:

Ա. Մ.

Վ. Պուտին. «Պոլիտկովսկայայի ազդեցությունը Ռուսաստանի քաղաքական կյանքի վրա նվազագույն էր»

«Աննա Պոլիտկովսկայայի սպանությունը Ռուսաստանին առավել մեծ վնաս է հասցնում, քան նրա հակառակորդները», սպանությունը հասատաղտ պատժելի տեսնելու ցանկություն արտահայտելով նման հայտարարություն է արել Վլադիմիր Պուտինը Դրեզդենում կայացած երեկվա ասուլիսում: Պոլիտկովսկայայի սպանության առնչությամբ Պուտինի երկար սպասված հայտարարությունն առավել քան յուրօրինակ է: «Պոլիտկովսկայայի ազդեցությունը Ռուսաստանի քաղաքական կյանքի վրա նվազագույն էր», ըստ «Էխո Մոսկվիի» նման գնահատական է տվել Վլադիմիր Պուտինը, միեւնույն ժամանակ նշելով, որ այդ սպանությունն ուղղված է երկրի, Ռուսաստանում եւ Չեչնիայում գործող իշխանությունների դեմ, քանի որ Աննա Պոլիտկովսկայան զբաղվում էր Չեչնիայի հարցերով:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԻՍՊԱՆԱԿԱՆ ԹԵՐԹՈՒՄ

Մերժ Սարգսյան. Փոխզիջում ներկա պահին նշանակում է Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչում

«Մենք չենք վախենում պատերազմից, բայց եւ չենք ցանկանում», իսպանական «էլ Պաիս» թերթին տված հարցազրույցում նշել է Հայաստանի նախագահին կից ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, պաշտպանության նախարար Մերժ Սարգսյանը: Ըստ նախարարի, արդեն ռազմական գործողությունն ակտիվացման միտումներ է ցույց տալիս, չնայած, մյուս կողմից, 2005 թ. Հայաստանն առաջ էր Ադրբեջանից տնտեսական աճի ցուցանիշներով:

Մերժ Սարգսյանի մոտեցմամբ, հնարավոր չէ մարտունակ բանակ կառուցել հենվելով բացառապես ֆինանսների վրա, ուստի եւ նախարարը խորհուրդ է տալիս հույս չդնել փողերի վրա, վերադառնալ արդեն մեկ անգամ Ղարաբաղի բնակչության դեմ Ադրբեջանի սանձազերծած անհաջող պատերազմի դասերի վերաիմաստավորմանը: Ինչ վերաբերում է ընդհանրապես խաղաղ ելքի հավանականությանը, ապա, Մերժ Սարգսյանի խոսքերով, դա հնարավոր է, տեղեկացնում է «Ռեգնում» գործակալությունը, արձագանքելով «էլ Պաիսին»: «Յուրաքանչյուր խաղաղ համաձայնագիր ենթադրում է կողմերի համաձայնություն: Դա ամուսնական միության նման է, եթե մի կողմը համաձայն է, մյուսը՝ ոչ, ապա այդ միությունը երբեք չի լինի: Ուստի եթե մենք ձգտում ենք խնդրի լուծմանը, իսկ Ադրբեջանը՝ ոչ, ապա ինչ կարելի է անել: Մենք օգնում ենք, որ հարցը կարելի է լուծել բացառապես խաղաղ ճանապարհով եւ փոխզիջման հիման վրա»: Տես էջ 2

Հիմա էլ Ադրբեջանն է «վրացի գող բռնում»

Ռուսաստանում վերջերս վրացական հանցավոր եւ թերեւս ոչ հանցավոր խմբավորումների ձերբակալություններից հետո Բաքվում բնակվող որոշ վրացիներ «Դեյ.ազ» գործակալությանը տեղեկացրել են, որ խստացված ստուգումներ են իրականացվում նաեւ Ադրբեջանում բնակվող վրացիների նկատմամբ, ընդ որում՝ հասարակական տրանսպորտում, մետրոյում, ժամանակավոր գրանցման վայրերում եւ աշխատատեղերում: Նույն գործակալության հավաստմամբ, Ադրբեջանի ներքին գործերի որոշ աղբյուրներ հավաստել են, որ իսկապես ստուգումներ իրականացվում են, բայց դրանք ժամանակավոր բնույթ են կրում՝ այն հիմնավորմամբ, թե Ռուսաստանից «էվող» վրացի «հեղինակությունները» կարող են հայտնվել Ադրբեջանում:

Միեւնույն ժամանակ Ադրբեջանի քաղաքական շրջանակներում ընդգծվում է Ռուսաստանի վերաբերմունքը Վրաստանի հանդեպ այն մոտեցմամբ, թե դրանք «ցուցադրական քայլեր են» Ադրբեջանի եւ Հայաստանի համար: Ավելին, Ռուսաստանի հակավրացական տրամադրություններն ու գործողությունները մեկնաբանվում են որպես Ռուսաստանի ներքին բարդ իրավիճակից ուշադրությունը շեղելու փորձեր:

Ամեն դեպքում, ըստ ադրբեջանցիների, հարկ է դաստ քաղել Ռուսաստանի՝ Վրաստանի հանդեպ վարած քաղաքականությունից, հատկապես հաշվի առնելով, որ Հայաստանն ու Ադրբեջանն այնպիսի աջակցություն չեն ստանում, ինչպիսին ունի Վրաստանը: Հետաքրքրական է, որ այս համատեքստում վրացաստանյան որակվող ռուսական քաղաքականությունն, ադրբեջանցի քաղաքագետների կարծիքով, այնքան էլ հավանականություն չունի դառնալ հայաստանյան, մինչդեռ ադրբեջանցիների հանդեպ բացասական վերաբերմունքը կարող է մեծանալ:

Երեւանում կբացվի ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոն

Այսօր երեկոյան Կենտրոնական Ասիայում եւ Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ռոբերտ Սիմոնսը կայցելի Հայաստանում ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոն, որը գտնվում է Զաքիյան 8 հասցեում: Նրա այցելությունից քիչ ավելի ուշ՝ նոյեմբերի 1-ին, տեղեկատվական կենտրոնը կսկսի իր գործունեությունը, որից քիչ ժամանակ անց տեղի կունենա պաշտոնական բացումը:

Երեւանում ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոնի հիմնումը նախատեսված է եղել ՆԱՏՕ-ի հետ «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի (ԱԳԳԾ) շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորությամբ: Կենտրոնի տարածքի վարձակալության ծախսերը հոգում է Հայաստանի կառավարությունը: Հայաստանում ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոնի հիմնադիրը «Տրանսատլանտյան նախաձեռնությունների հայկական կենտրոն» տեղեկատվական հասարակական կազմակերպությունն է:

Ռ. Պ.

Դրամական փոխանցումներին նվիրված միջազգային միջբանկային համաժողով Երեւանում

Այսօր Երեւանում տեղի կունենա «Դրամական փոխանցումներ: Բանկային ծառայություններ» հերթական՝ երրորդ միջազգային միջբանկային համաժողովը: Համաժողովին հրավիրված են եւ ելույթներ կունենան Ռուսաստանի բանկերի ասոցիացիայի նախագահ Գարեգին Թոսունյանը, Մոսկվայի բանկերի արժութային ասոցիացիայի նախագահ Ալեքսեյ Մամոնտովը, ինչպես նաեւ Հայաստանի բանկերի միության նախագահ Ստեփան Գիշյանը եւ ուրիշներ: Միջոցառմանը կմասնակցեն ԱՊՀ եւ Բալթյան երկրների մի քանի տասնյակ բանկերի, «Անելիք», «Արագ փոստ», «Յունիստրիմ», Private Money եւ այլ դրամական փոխանցումների համակարգերի ներկայացուցիչներ, իսկ կազմակերպիչներն են «Պլանետա դիաստոր» եւ «Անելիք-դրամական փոխանցումներ» համակարգերը:

Ա. Մ.

Հարավային Կորեայի արտգործնախարարը ՄԱԿ-ի նոր գլխավոր քարտուղարն է

Հարավային Կորեայի արտգործնախարար Վան Գի Մունը երեկ նշանակվել է ՄԱԿ-ի նոր գլխավոր քարտուղար եւ այդ պաշտոնում 2007 թ. հունվարի 1-ից 5 տարով կփոխարինի Կոֆի Անանին:

Մինչ Հարավային Կորեան բախվում է իր հյուսիսային հարեւան ԿԺԴՀ-ի միջուկային փորձարկման հարուցած բարդություններին, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ 15 պետությունների ներկայացուցիչները հարավկորեացի 62-ամյա դիվանագետին ընտրում են համաշխարհային կազմակերպության գլխավոր քարտուղարի անչափ պատասխանատու պաշտոնում:

ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն, կազմակերպության անդամ 192 պետություններն առաջիկա մի քանի օրվա ընթացքում պետք է հաստատեն Ախ-ի որոշումը:

Իր նշանակման առթիվ Վան Գի Մունը հայտարարել է, որ իր առաջին խնդիրը լինելու է հյուսիսկորեացիների միջուկային ծրագրի առաջացրած ճգնաժամի հաղթահարումը:

Ֆրանսպրեսը նշում է, որ Վան Գի Մունի նշանակումը կասկած չէր հարուցում, քանզի արդեն անցյալ երկուշաբթի ՄԱԿ-ի Ախ հինգ անդամներ նախնական քվեարկության ժամանակ հաստատել էին կորեացու թեկնածությունը, իսկ նրա 6 մրցակիցները դուրս էին եկել մրցակցությունից:

ՄԱԿ-ի պատմության մեջ սա առաջին դեպքն է, երբ նման արագությամբ աղահովվում է ընդհանուր համաձայնություն: Կոֆի Անանի ընտրության ժամանակ, օրինակ, պահանջվել էին երկարատեւ բանակցություններ եւ բազմաթիվ քվեարկություններ:

Այս անգամ թեկնածուների մեծ մասն ասիացիներ էին (միակ բացառությունը Լատվիայի նախագահ Վայրա Վիկե Ֆրեյբերգան էր), քանզի վերջին 15 տարիներին ՄԱԿ-ը գլխավորել էին Աֆրիկայի ներկայացուցիչները (Բուտրոս Բուտրոս-Ղալի՝ 5 տար, Կոֆի Անան՝ 10 տարի): Այժմ Ասիայի հերթն է:

Պ. Ք.

www.azg.am www.azgdaily.com www.azgdaily.eu

ԱՅԼԸՆՏՐԱՆՔ

Է՛ս է մեր կյանքը

Ժամը 12-անց 10-ից մինչեւ 13-անց 15 փորձում էի երջանայինից ընկնել «Կոնգրես» հյուրանոցի մոտ: Չէր սացվում, որովհետեւ ամենօրյա տանջող ցերեկային խցանումներին ավելացել էր Տերյան-Աբովյան խաչմերուկի հրասարդ ասֆալտադրումը, որը տեղի էր ունենում ի հեճուկս կիլոմետրանոց «պրոբկայի». էն տեսակ քառակողմ մի «խցանում» էր Նալբանդյան փողոցից մինչեւ Մատենադարան, որ անգամ ջիպերի եւ ԲՄՎ-ների տերերն իրենց անօգնական երթեւեկող էին զգում եւ չէին կարողանում դուրս գալ անելանելի վիճակից՝ հասնելու հասկացող խաղաղի կենտրոնի երկու-երեք մոդային դդրոցում սովորող իրենց սիրասուն զավակներին ու նրանց տուն թոցնեն: Ու սացվել էր մի սպանիչ քիլաափոթ: Այստեղ են ասել՝ մեկը չկա այս խաղաղում՝ արգելի պիկ ժամերի ասֆալտադրումը, աշխարհի մեծ խաղաղներում դրա համար օգտագործում են գիշերային հանգիստ ժամանակը: Բայց դե մեր խաղաղում ո՞վ է հաշվի նստում այնպիսի մանրուքի հետ, ինչպիսին երթեւեկությունն ու մարդկային նյարդերն են: 54 երթուղուց իջա-նստեցի 38 երթուղու երթուղայինը, դրանից էլ իջա-նստեցի խաղաղը խեղդող տախտակներից մեկը. սա էլ «պրոբկան» մի կերպ տարբեր ծակուծուկերով հաղթահարելուց հետո 1000 դրամից 100-ը վերադարձրեց՝ «չունեմ» կարգախոսով: Մի խոսքով 13 անց 22 ընչակետ ընկա «Կոնգրես» հյուրանոցի «Պիկասո» դահլիճ, որտեղ ժամը 13-ից ծավալվում էր ներկա կյանքի «Այլընտրանքը»՝ քառմ ուժ Նիկոլ Փաշինյանով, Աղասով, դեռ լավ չմոռացված հին Պետրոս Մակեյանով, որոնք ներկայացնում էին մի բան, որ մեր գործող առօրյա կյանքի այլընտրանքն էր:

Որ ուզացել էինք՝ դեմքերին նայելուց առաջ հայացք գցեցինք «Այլընտրանք» հասարակական-քաղաքական նախաձեռնության հեղինակների բաժանած գրքույկներին, որտեղ 4-րդ էջին նախաձեռնող խմբի անուններն էին՝ Աբգարյան Երջանիկ, Արարքյան Բաբկեն, Գետրգյան Սամվել, Խաչատրյան Վահագն, Ղազարյան Սամսոն... 88-ի շարժման նո՞ր փորձ է: Լիակատար «դեժավյուին» խանգարեցին միայն Նիկոլի ու Աղասու անունները:

Դե լավ, մեզ հավաքենք եւ պատմենք, թե ի՞նչ է այդ «Այլընտրանքը», ինչի՞ն եւ ո՞ւմ է «Այլընտրանք» «ինքնապաշտ վարչախմբից օր առաջ ազատվելու», տարբեր ուժերի եւ հատկապես անհատների ֆորմատով այս փուլում աշխատելու խնդիրներ դրած, գլխաթանակային քաղաքականությամբ չառաջնորդվող այս նոր «դվիժենին», որի սկզբունքային մոտեցումները փոխնիփոխ ներկայացնում էին Նիկոլը, Աղասի Ենոքյանը, «ժողովրդավարական հայրենիքի» Պետրոս Մակեյանը:

Նիկոլ-Մեզ համար կարեւոր է, որ ներկայացնենք աշխարհայացքային այլընտրանք, ոչ թե անձերի հավաքածու:

Աղաս-Ի տարբերություն մինչեւ այժմ եղած նախաձեռնությունների՝ կուսակցությունների միավորում չէ, ինչը մեծ խոչընդոտներ է ստեղծում, այլ անձերի միավոր է եւ այս առումով ստեղծագործական աշխատանքի բավականաչափ հնարավորություն է տալիս. հստակ ծրագրային փաստաթուղթ է ներկայացված, տրված է իրավիճակի գնահատական եւ այդ իրավիճակից դուրս գալու քայլերն են մատնանշված:

Նիկոլ-Մեր քաղաքական պարտությունը մեր քաղաքացու գիտակցությունն է...Հայաստանը հասել է այնպիսի եզրի, երբ խնդիրները հնարավոր չէ լուծել, եթե Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի չգիտակցի եւ չընդունի սեփական պատասխանատվությունը իրավիճակը հաղթահարելու գործում...

Պետրոս-Մեր նախաձեռնությունը բաց է՝ եթե որեւէ քաղաքական ուժ ընդունում է մեր ծրագրային հիմունքները եւ դրանց հիման վրա մեր ծրագրային գործողությունները:

Նիկոլ-Լետն Տեր-Պետրոսյանը ծանոթ է փաստաթղթի բովանդակությանը, իսկ նախաձեռնող խմբի կարծիքը նրա նկատմամբ մեծագույն հարգանքն է:

Մի խոսքով՝ երեկ «Կոնգրես» հյուրանոցում ստեղծվեց «Այլընտրանք» քաղաքական միավորումը՝ ընդհանուր աշխարհայացքի հիմքով, որը քաղաքական կուսակցություն չէ, բայց մասնակցելու է բոլոր քաղաքական գործընթացներին:

98-ին ՀՀՇ-ի մի թեւ իշխանությունը սահուն հանձնեց, ու հիմա քննադատում է նրանց, ում հանձնել է՝ հուսալով սահուն հետ ստանալ: Բայց նույն գետը երկրորդ անգամ մտնողը, չնայած «թարմ» տղերքին, խեղդվելու վտանգը պետք է աչքի առաջ ունենա:

Մ. Խ.

ԱՄԵՐԻԿԱՅՈՒ ՀՈՐԳՈՐԸ ՄԵՐՈՆՑ

«Սիրելի դասավոր-դասախազներ, հարգեք փաստաբանությունը»

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության նախագահ Քերին Ջ. Մեթիսը եռօրյա այցելությամբ պատվել է Հայաստանը: Նրա այցելության նպատակն է ստուգել իրենց կազմակերպության աջակցության իրական արդյունքները: Հայաստանի փաստաբանների միությանն արված աջակցության մասին **«Ազգին»** պատմում է փաստաբան Մելանյա Առուստամյանը: «Նրանք ցեմարաններ են կազմել՝ ստեղծելով նաեւ դրանց համապատասխան համակարգչային ծրագրերը: Ապա դրանց հիման

վրա փաստաբանների ննություն են իրականացրել: Այդ ննությունների շնորհիվ համալրվել է փաստաբանների թիվը երկու հարյուրով: Այս երեւույթը հատկապես կարեւոր է նրանով, որ փաստաբանների պալատը հին կառույց է՝ դարն ապրած փաստաբաններով: Նրանք օգնեցին, որ փաստաբանական կառույցը երիտասարդանա ու ամրանա որակյալ փաստաբաններով», ասաց Փաստաբանների պալատի խորհրդի անդամ Մ. Առուստամյանը: Հետաքրքրական է, որ փաստաբանների ննությունը վերջին տարիներս դարձել է ավանդույթ: Այս տարի Քերին Ջ. Մեթիսի հանդիպումը հայ իրավաբանական երջանակների ներկայացուցիչների հետ տեղի ունեցավ երեկ «Գոլդեն փալաս» հյուրանոցի դահլիճներից մեկում: Ներկաները խիստ տպավորվել էին ճաշկերույթի ընթացքում Քերին Ջ. Մեթիսի հնչեցրած ելույթից, որի ժամանակ նա համեմատեց իրավաբանական համակարգի մի շարք բաժինների՝ դասախազության, դատարանների եւ փաստաբանների աշխատանքային պայմանները: Փաստորեն դասախազությունն ու դատարաններն ունեն շատ ընդհանուր, բայց փաստաբանները տեղակայված են ոչ իրենց սեփականությունը հանդիսացող շենքի առաջին հարկում: Նա դասավորներին եւ դասախազներին կոչ արեց օգնել եւ հարգել փաստաբանությունը, քանզի այս կառույցը մարդու, քաղաքացու իրավունքները, շահերը պաշտպանող հիմնական ինստիտուտն է:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Սերժ Սարգսյան. Փոխզիջում ներկա պահին...

1-ին էջից

Իսկ թե ինչ ասել է փոխզիջումը, նախարարը բացատրում է նախեւ առաջ ամուր խաղաղության առկայությամբ, որի հաստատումից որոշ ժամանակ անց հնարավոր է Ադրբեջանից փախստականների վերադարձ Ղարաբաղ: Թեեւ պատմության ընթացքում բախումներ ու պատերազմներ եղել են, Ադրբեջանի հետ հարաբերությունները շարունակվել են: Այսինքն՝ հայն ու ադրբեջանցին ապրել են միասին: Բայց ներկա պահին, երբ քարմ են վերքերը, Սերժ Սարգսյանը գտնում է, որ փախստականների վերադարձն անհնար է: Եվ տվյալ դեպքում փոխզիջում ասելով պետք է հասկանալ, որ Ադրբեջանը պետք է ճանաչի եւ ընդունի Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Փոխզիջման այլ բաղկացուցիչներ էլ կան, որոնք սակայն, նախարարը չի մանրամասնել:

Նախարարը մեկ անգամ եւս հաստատել է Հայաստանի դիրքորոշումը Ղարաբաղի հարցը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում լուծելու եւ ոչ թե մեկ այլ կառույց տեղափոխելու նպատակահարմարությունը: Իսկ բանակցային գործընթացին Ղարաբաղի մասնակցությունը Սերժ Սարգսյանը գտնում է օգտակար ցանկացած փուլում, մինչ այսօր էլ Ղարաբաղի չմասնակցելը բանակցություններին Ադրբեջանի կտրուկ դիրքորոշումն էր, որի պարագայում ընտրությունը մեկն էր՝ կամ բանակցել առանց Ղարաբաղի, կամ ընդհանրապես չբանակցել: Վերջինի դեպքում մեծանում էր պատերազմի հավանականությունը:

Ամեն դեպքում, Սերժ Սարգսյանի վստահեցմամբ, Հայաստանը պատրաստ է, անգամ եթե վաղը ռազմական գործողություններ սկսվեն, թեեւ մոտ ապագայում, Սարգսյանի կարծիքով, ռազմական գործողություններ չեն վերսկսվի մի շարք պատճառներով. նախ ադրբեջանական բանակն ի վիճակի չէ ռազմական գործողություններ իրականացնել նման մասշտաբներով, երկրորդ՝ համաշխարհային հանրությունը կարտահայտի իր դիրքորոշումն այդ գործողությունների նկատմամբ: Չէ՞ որ Ղարաբաղում պատերազմի վերսկսումը ռազմական գործողությունների թարմացում կնշանակի շատ տեղերում: Պաշտպանության նախարարը գտնում է, որ ռազմական գործողությունների բացակայությունն արդեն իսկ դրական է, որն արդյունք է նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության:

Ինչ վերաբերում է Իրանի դեմ պատժամիջոցների, Աբխազիայում եւ Հարավային Օսիայում խնդիրների սրման անդրադարձին Հայաստանի վրա, ապա Սերժ Սարգսյանը գտնում է, որ ազդեցությունը բացասական կլինի, եւ Հայաստանում կայունության սպառնալիք կառաջանա: Եվ քանի որ կայունությունն ընդհանրապես տարածաշրջանում կարեւոր գործոն է, ապա Սերժ Սարգսյանը հավանական է համարում Կովկասում ինտեգրացիան Ադրբեջանի եւ Վրաստանի հետ: Թեեւ Ադրբեջանի հետ այդ մասին հնարավոր կլինի խոսել Ղարաբաղի խնդրի լուծումից հետո:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Փորձը ցույց է տվել, որ նախընտրական միավորումներն ավարտվում են հետընտրական ծանր ապահարզաններով»

«Փորձը ցույց է տվել, որ նախընտրական միավորումներն ավարտվում են հետընտրական ծանր ապահարզաններով», առաջիկա ընտրություններում հաջողությունների հասնելու նպատակով միավորվող կուսակցությունների եւ դաշինքների առնչությամբ երեկ այս կարծիքը հայտնեց Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության (ՔԴԿ) ղեկավար **Խոսրով Հարությունյանը**: Նա համոզված է, որ ապագա խորհրդարանի կազմը առանձին, շատ փոքր բացառություններով, բայց այնուամենայնիվ կվերարտադրվի: Ինչ վերաբերում է հենց իրենց կուսակցության կամ նրա ղեկավարի նպատակներին, ապա Խոսրով Հարությունյանը նշեց, որ ինքը նախագահ դառնալու հավակնություններ չունի, թեեւ համոզված է, որ իր քաղաքական անցյալը դա թույլ է տալիս: Քաղաքական մեծամասնություն լինելու նպատակ կուսակցությունը նույնպես չունի. քաղաքական հիշյալ միավորումը, որն Հարությունյանի պնդմամբ, ավելի շատ կարետրում է քաղաքական գործընթացների որակը: Ընտրություններում իրենց նպատակները մանրամասնելուց որն Հարությունյանը զերծ մնաց:

Առաջիկա խորհրդարանական եւ նախագահական ընտրությունների ժամանակ Խոսրով Հարությունյանը գաղափարաբանական հենքի վրա հայեցակարգային պայքար չի ակնկալում: Կուսակցության ղեկավարը կարծում է, որ ընտրություններում պայքարի հիմնական շարժառիթը լինելու է իշխանության գալը, որի համար գործի կդրվեն պոպուլիզմը, փողը եւ կուսակցությունների քանակը: Ինչ վերաբերում է մեր երկրի ընտրությունների ժամանակ արտաքին միջամտություններին, ապա, որն Հարությունյանի կարծիքով, բիրտ միջամտություն չի լինի, սակայն կլինեն ուժեր, որոնք կաշխատեն դրսի հետ:

«Քաղաքական պրոցեսը որակազրկվել է», ներքաղաքական իրավիճակի մասին խոսելիս ասաց ՔԴԿ ղեկավարը, ում կարծիքով քաղաքական պրոցեսն այսօր ընկալվում է զուտ պայքար իշխանության համար, եւ ցավալիորեն պակասում են գաղափարաբանական հենքի վրա կառուցված կուսակցությունները, թեպետ սաղմնային վիճակում գտնվողներ էլ կան, որոնք, որն Հարությունյանի համոզմամբ, կզարգանան: Նրա խոսքով, կուսակցությունների ազդեցիկության արտահայտումն այսօր մեծամանակությունն է: Բացակայում է նաեւ ներկուսակցական ժողովրդավարությունը, որն ազգային անվտանգության տեսանկյունից կարեւոր է: Կուսակցության ղեկավարը կարեւորում է քաղաքական գործընթացների բովանդակության նկատմամբ պահանջարկի ձեւավորումը, որի դեպքում կուսակցությունների շարքերում կհայտնվեն պրոֆեսիոնալներն ու կսպասարկեն հանրային շահը:

Հակակրիմինալ շարժման առնչությամբ Խոսրով Հարությունյանը նշեց, որ եթե կրիմինալ ասելով հասկանում ենք քաղաքական կյանքում ազդեցիկ դերակատարում եւ կրիմինալ անցյալ ունեցողներին, ապա ինքը քաղաքականության մեջ նոր մարդկանց չի տեսնում: Իսկ եթե կրիմինալ ասելով հասկանում ենք քաղաքական իշխանությունը սեփական շահերին ծառայեցնելը, ապա որն Հարությունյանի խոսքով, դա նոր մտահոգություն չէ մեզ համար: ՔԴԿ ղեկավարը վստահ է, որ այդպիսի լղոզված ձեւակերպումների ֆոնի վրա հակակրիմինալ շարժումը կարող է վերածվել վիուկների որսի. «Հարցադրումն արհեստածին է եւ դրական լիցքեր ինչ է պարունակում»: Կուսակցության առաջնորդը համամիտ չէ հիշյալ հարցը քաղաքական կուսակցությունների միավորող, առանցքային հարց դարձնելուն: «Իսկ այլ կերպ ինչպե՞ս պետք է պայքարել կրիմինալի դեմ», **«Ազգ»**-ի հարցին պատասխանելիս Խոսրով Հարությունյանն ընդգծեց, որ այդ պայքարը պետք է լինի յուրաքանչյուր կուսակցության ծրագրային բաղկացուցիչը:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժե տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg2@arminco.com, azg@azg.am
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱՎՈՒՐ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱՎՈՒՐԵԱՆ / հեռ 529221
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Հանձնարարություններ / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայություն / հեռ 529353
Հանձնարարչային բաժանմունք
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր ամսագրի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Մեր երկրի բնակչության 60-70 տոկոսը հոգեկան առողջության խնդիրներ ունի

Հետազոտված երիտասարդների 70-80 տոկոսի տագնապի զգացողությունը ախտաբանական մակարդակի է հասնում

Մարդը հազար ու մի խնդիր ու հոգս ունի, առավել եւ քաղաքակրթվածության ծանր ճանապարհ անցնող մեր երկրի քաղաքացին: Այդ խնդիրները երբեմն ծանր առրումներ ու սրեսներ են առաջացնում, հաճախակի փորձության ենթարկում նրա հոգեկան խաղաղությունը: Սա հենց այն բարեբեր հողն է, որում հեշտությամբ զարգանում են ամենաանհավանական ծանր ախտեր, որոնց թվում եւ հոգեկան հիվանդություններ: Յուրաքանչյուր հասարակության բնակչության 3 տոկոսը նման խնդիրներ ունի: Հոգեկան հիվանդությունները, անկախ երկրի սոցիալ-տնտեսական ու բնակչության բարեկեցության մակարդակից, բոլոր երկրներում գրեթե նույն թվերն են ներկայացնում: Սրանք կազմած են ավելի շատ մարդու կենսական (գենետիկ, ժառանգական, անձնային) մեխանիզմների հետ: Օրինակ, Շիզոֆրենիայի միջազգային տվյալները 0,7-1,2 տոկոս են, եւ նույն մակարդակը նաեւ Հայաստանում է: Սոցիալական վիճակով, գուցե նաեւ երկրաշարժով, տնտեսական ճգնաժամերով ու արցախյան պատերազմով պայմանավորված Հայաստանում անհամեմատ շատ է ու շատանում է սահմանային վիճակներում՝ նեւրոզներով, դեպրեսիաներով տառապող անձանց թիվը: Հոգեկան առողջության վատթարացման մեջ արդեն թե՛ երկրի վիճակը, թե՛ մարդու ապրած միջավայրը, թե՛ ընտանեկան ու միջանձնային հարաբերությունները, թե՛ կորուստները կարող են մեծ դեր խաղալ:

Հայաստանում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց թիվը ընդհանուր առմամբ հասնում է 30 հազարի, բայց սրանք միայն գրանցված հիվանդներն են: Մնացածները բժշկական որեւէ հսկողությունից դուրս են եւ հարկադված ողջ կյանքի ընթացքում հանդուրժում են հասարակության թեական վերաբերմունքն ու մեկուսացվածության բոլոր դժվարությունները:

«Սրես» հոգեկան առողջության կենտրոնի տնօրեն **Սամվել Սուքիասյանը** հավաստում է, որ զարգացած երկրներում բնակչության 40-60 տոկոսն ունի հոգեկան առողջության խնդիրներ, իսկ մեր կարգի՝ պարզապես զարգացման ճանապարհին գտնվող երկրներում այդ ցուցանիշը 60-70 տոկոս է: Քանի որ վիճակագրական հետազոտություններ չկան, լոկ հայեցողական դիտարկումներով մասնագետները պնդում են, որ այդ թիվը շարունակում է աճել: 18-22 տարեկան ուսանող երիտասարդների շրջանում կատարված ուսումնասիրության համաձայն, որի նպատակը նրանց ագրեսիվության եւ հուզական վիճակի հետազոտումն էր, պարզվել է, որ երիտասարդների 60-70 տոկոսի մեջ տագնապի տիրապետող զգացողությունն արդեն ախտաբանական մակարդակի է հասել: Դա հաստատում է, որ նեւրոզներն ու սրեսները, որոնց այնքան էլ ուշադրություն չենք դարձնում, կարող են ծանր ավարտ ունենալ: Դրանք ոչ հազվադեպ հանգում են նաեւ ինքնասպանությունների: Սամվել Սուքիասյանը ասում է, որ ինքնասպանության փորձերը կամ ինքնասպանության, մտասեւեռումով տառապող անձանց թիվն անհամեմատ ավելացել է մեր հասարակությունում: Նա հենվում է դասախոսության տվյալների եւ սեփական հիվանդների դիտարկումների վրա, որոնց մեջ այս մասին խոսողները եւ նույնիսկ ինքնասպանության փորձ անողներն ավելի հաճախ են հանդիպում: Ի դեպ, մասնագետները Հայաստանում արձանագրում են նաեւ ալկոհոլամոլության հետեւանքով առաջացած փսիխոզների աճումը:

Երեւանում ընդհանուր առմամբ հոգեբուժական 7-8 հաստատություններ կան: Հանրապետական կենտրոնը միավորել է Ավանի, Նորքի, Նուբարաշենի, Քասախավանի 4 նմանատիպ հաստատությունները, ստացիոնարներ ու դիսպանսերներ են գործում Սեւանում, Վանաձորում, Գյումրիում, Կապանում: Սակայն հանրապետությունում ծանր է հոգեբույժ մասնագետների հարցը: Դեպրեսիաներով, զանազան հոգեկան հիվանդություններով տառապող մարդկանց թվի ավելանալուն զուգընթաց նվազում է հոգեբույժ մասնագետների քանակը: Պետական տվյալներով նրանց թիվը հասնում է 150-ի, սակայն հենց իրենց՝ մասնագետների պնդմամբ՝ 80-ի էլ չի հասնում: Երեւանի ոչ բոլոր պոլիկլինիկաները մասնագետներ ունեն, ոչ բոլոր մարզերում կան հոգեբույժներ: Նրանց մի մասը հեռացել է Հայաստանից, մի մասն էլ թողել է անեկամտաբեր մասնագիտությունը: Հոգեկան հիվանդների համար նախատեսված դեղորայքի տեսականին, հակառակ 7-8 տարի առաջ տիրող իրավիճակի, շուկայում խիստ առատ է:

Այսօր առկա է այլ պրոբլեմ: Թմրամոլության դեմ պայքարում ծայրահեղության հասնելով, ՆԳ վարչությունների, իրավապահ մարմինների նախաձեռնությամբ չափազանց դժվարացել է տագնապը մարող դեղամիջոցների ձեռքբերումը, անգամ միջին ծանրության հիվանդին խիստ անհրաժեշտ դեղերը խստորեն վերահսկվում են: Առանց դեղատոմսի դրանք չեն տրվում, կամ տրվում են քաղաքացիներից հետո: Սամվել Սուքիասյանը պատմում է իր հիվանդներից մեկի հետ կատարված զավեշտը: Ոստիկանը բռնել է նրան, որովհետեւ գրպանում հայտնաբերել է «լորազեպան» դեղը, որ նա ամեն օր օգտագործում է: Նրան ազատ են արձակել միայն բժշկի միջամտությունից հետո: «Այսօր հոգեմետ դեղերը խառնում են թմրանյութի հետ, ասելով, որ դրանք նույն ներգործությունն են ունենում: Սակայն կախվածություն նույնիսկ սովորական անալգինը կարող է առաջացնել, որը հոգեմետի հետ ոչ մի կապ չունի», ասում է Սամվել Սուքիասյանը:

Ի դեպ, եվրոպական շատ երկրներում իրեն ինչ թե շատ ինտելիգենտ համարող մարդը մշտապես գրպանում ունենում է հանգստացնող դեղեր, մտածելով, որ դրանք կարող են պետք գալ օրվա ընթացքում: Հոգեկան լարումները սահմանային վիճակի չհասցնելու եւ որեւէ հիվանդություն չվաստակելու համար մեր բնակչությունը որեւէ ճար չունի:

1992 թվականից հոկտեմբերի 10 ողջ աշխարհում նշվում է իբրեւ Հոգեկան առողջության համաշխարհային օր: Հայաստանում հոգեկան առողջության առաջին համայնքային ծառայությունը երեկ ՄԱԿ-ի գրասենյակում օրը նշում էր հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց գեղարվեստական ստեղծագործությունների (գեղանկարներ, գոբգ, կավե աշխատանքներ, ասեղնագործություն) ցուցահանդեսով:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Վերջին տնակային դպրոցը՝ նոր շենքում

Գյումրու 33-րդ միջնակարգ դպրոցի նոր շենքի երեկ տեղի ունեցած հանդիսավոր բացումը առանձնահատուկ իրադարձություն էր քաղաքի կյանքում: 18 տարվա դժվարություններից ու սպասումներից հետո իր նորամուտը տոնեց քաղաքի վերջին տնակային դպրոցը: 260 աշակերտական տեղով, 310 մլն դրամ արժողությամբ գեղեցիկ ու հարմարավետ շինությունը կառուցվել է շվեյցարացի բարերար Լյուսիան Շտումֆի եւ նույն երկրում գործող «Արմենիանոս» հիմնադրամի ֆինանսավորմամբ, «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի դրամաշնորհով ու կազմակերպական աջակցությամբ: Նախագծումը, հեղինակային եւ տեխնիկական վերահսկողությունը «Պրոջեքթ ընդ դիզայն» ՍՊԸ-ինն է: Կառույցի նշված արժեքի մեջ մտնում է նաեւ լավ կատարված կահավորումը:

Ջերմ մթնոլորտում տեղի ունեցած բացման արարողության ժամանակ ելույթ ունեցան Շիրակի մարզպետ Ռոմիկ Մանուկյանը, Գյումրու փոխքաղաքապետը, շինարարության ֆինանսավորողներն ու կազմակերպիչները, նրանց ողջունեցին դպրոցի սաները: Ինչպես նշվեց, սա նաեւ լավ նվեր էր Հայաստանի անկախության 15-ամյակին:

Դպրոցաշինությունը առաջին ավարտին հասցված վերականգնողական ծրագիրն է հետերկրաշարժյան Գյումրիում, ինչի առթիվ կարելի է շնորհավորել նաեւ հանրապետության կառավարությանը: Դա մասամբ ձեռք է բերվել նաեւ միջդպրոցական օպտիմալացման ճանապարհով՝ քաղաքի 9 դպրոցների վերացմամբ ու դրանց միավորմամբ այլ դպրոցների հետ: Շիրակի մարզպետարանի տվյալներով՝ ամբողջ մարզում երկրաշարժի հետեւանքով շարքից դուրս էր եկել 137 դպրոցական շենք, մինչեւ օրս ֆինանսական տարբեր աղբյուրներով կառուցվել եւ վերականգնվել է 85-ը: Կրթօջախներից 66-ի, այդ թվում Գյումրու 20 դպրոցների համար դեռ անհրաժեշտ է կառուցել մարզադահլիճներ, լուծել լոկալ ջեռուցման համակարգերի ոչ պակաս ծավալուն խնդիրը: Նոր հանձնված 33-րդ միջնակարգ դպրոցի հետ կառուցվել է նաեւ կաթսայատունը, իսկ մարզադահլիճի կառուցումը սպասվում է արդեն եկող տարի, պետբյուջեի միջոցներով:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
Գյումրի

ՍՊԸՍՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՅՄԱՆ ԵՊԱՏԱԿՈՎ

Մեկնարկել է ԱՀՈԾ վերանայման գործընթացը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, համագործակցելով շահագրգիռ բոլոր կողմերի հետ, ձեռնամուխ է եղել Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի վերանայմանը: ԱՀՈԾ վերանայման կազմակերպման եւ իրականացման սկզբունքները սույն թվականի մայիսի 19-ի հերթական նիստում հաստատվել են ԱՀՈԾ համակարգող խորհրդի կողմից, որը կայացել է ՀՀ վարչապետի նախագահությամբ:

Արդեն իսկ շահագրգիռ տարբեր կողմերի հետ ԱՀՈԾ աշխատանքային խմբի քննարկումների արդյունքում հաստատվել են կազմակերպվելիք հանրային եւ մասնագիտական քննարկումների թեմաներն ու ժամանակացույցը: Ելնելով նշված ժամանակացույցից՝ սույն թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին տեղի է ունեցել շուրջ 10 քննարկում, ինչպես հանրապետական, այնպես էլ մարզային մակարդակներում:

Մարզային քննարկումների համար առանձնացված յոթ թեմաներից այժմ «Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի հետ համատեղ, քննարկումներ են կազմակերպվում հետեւյալ հիմնախնդիրների շուրջը՝ «Գյուղում ոչ գյուղատնտեսական զբաղվածության հնարավորությունների ստեղծման հիմնախնդիրներ», «Փոքր եւ միջին բիզնեսի զարգացման խնդիրներ եւ հեռանկարներ» եւ «Զբաղվածության ծրագրերի հասցեականություն եւ արդյունավետություն»:

Քննարկումներին մասնակցում են ԱՀՈԾ աշխատանքային խմբի, համապատասխան գերատեսչությունների, մարզպետարանների եւ տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ գործարարներ եւ գործատուներ:

Հոկտեմբերի 9-ին մարզային հերթական հանդիպումը կազմակերպվեց Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում: Հանդիպման մասնակիցներն իրենց տեսակետները ներկայացրին ԱՀՈԾ աշխատանքային խմբի ղեկավարին (ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ս. Ղարայանին) եւ աշխատանքային խմբի մյուս անդամներին:

Մասնավորապես հանդիպման մասնակիցների կողմից որպես ՓՄՁ զարգացման հիմնական խնդիրներ, նշվեցին հակամենաշնորհային քաղաքականության եւ հավասար մրցակցության ապահովման հարցերը: Առանձնացվեցին նաեւ ֆինանսական ռեսուրսների մատչելիության, հատկապես դրանց տոկոսադրույքների եւ ժամկետայնության խնդիրները: Հանդիպման մասնակիցները նշեցին նաեւ, որ մարզերում սահմանափակ թվով բանկերի մասնաճյուղերի առկայության պարագայում մրցակցությունը սահմանափակ է եւ չի նպաստում վարկերի տրամադրման ընթացակարգերի պարզեցմանն ու պայմանների բարելավմանը:

Մարզում իրականացվող զբաղվածության ծրագրերի քննարկման ընթացքում մասնակիցները կարեւորեցին ոլորտը կարգավորող նոր օրենքով սահմանված զբաղվածության ակտիվ ծրագրերի շրջանակներում իրականացվելիք ծրագրերը, մասնավորապես աշխատաշուկայում խոցելի համարվող խմբերի համար աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծրագիրը: Միաժամանակ կարեւորվեց վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրի իրականացման մեխանիզմների վերանայման խնդիրը, հաշվի առնելով, որ այդ ծրագրերի արդյունավետությունը բավականին նվազել է վերջին երկու տարիների ընթացքում:

Հանդիպման արդյունքներով համաձայնություն ձեռք բերվեց ամփոփիչ քննարկում կազմակերպել Երեւանում, որի հիման վրա կձեւակերպվեն ԱՀՈԾ վերանայված տարբերակում սահմանվելիք քաղաքականության ուղղությունները:

ԱՀՈԾ աշխատանքային խումբ

Ցավակցություններ

ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը եւ ՀՀ կառավարությունը խորապես ցավակցում են Աբրահամյանների ընտանիքին սիրելի մոր՝ **Պայծառ Աբրահամյանի** մահվան կապակցությամբ:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչությունը խորապես ցավակցում է Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ, Հիմնադրամի հավատարիմ բարերար Արա Աբրահամյանին՝ սիրելի մոր՝ **Պայծառ Աբրահամյանի** մահվան կապակցությամբ:

Հայաստանի ժուռնալիստների միությունը խորապես վշտակցում է Աբրահամյան ընտանիքին՝ սիրելի մոր՝ **Պայծառ Աբրահամյանի** մահվան կապակցությամբ:

Խորը վշտով ցավակցում ենք Աբրահամյանների ընտանիքին սիրելի մոր՝ Պայծառի մահվան կապակցությամբ:

Հայաստանի գրողների միության նախագահություն
«Լիտերատուրնայա Արմենիա» հանդեսի խմբագրություն

Հարգելի Արա Արեավիրի

Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի վարչական կոլեկտիվները ցավակցում են Ձեզ եւ Ձեր ընտանիքին՝ թանկագին մայրիկի անժամանակ մահվան առթիվ:

Պայծառ Կարապետի Աբրահամյանի ողջ կյանքը ճշմարիտ արիության, ինքնամոռաց աշխատանքի, արտասովոր կամքի ուժի եւ խոր հավատի վկայություն էր:

Չնայած ճակատագրի բաժին հասած ծանր փորձություններին՝ իմաստության եւ անսովոր էներգիայի շնորհիվ նա կարողացավ արժանիորեն դաստիարակել եւ ոտքի կանգնեցնել 6 երեխաներին՝ շարունակելով Աբրահամյանների ընտանիքի բարի ավանդույթները:

Նրա ողջ կյանքի իմաստն ընտանիքն ու երեխաներն էին, մարդկանց հանդեպ սերն ու հոգածությունը:

Ձեր մոր ուսերին ընկած դժվարությունները նրա ծանր հիվանդության պատճառը դարձան, որի դեմ նա պայքարում էր մինչեւ իր կյանքի վերջին օրերը՝ իրեն հատուկ ամրությամբ եւ արիությամբ:

Պայծառ Աբրահամյանի կյանքի սխրանքը՝ Հայաստանի արժանի զավակների դաստիարակումը, խորհրդանշում է Հայ Մոր իսկական կերպարը:

Մենք խորապես սգում ենք Աբրահամյանների ընտանիքի ծանր եւ անդառնալի կորուստը: Պայծառ Աբրահամյանի լուսավոր հիշատակը վառ կմնա մեր սրտերում:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ
10 հոկտեմբերի 2006 թ.

Մեր հեղինակությունը ձեռք ենք բերել տարիներով

Ասում է «Հայբուսակի» ռեկտոր Անահիտ Հարությունյանը

«Հայբուսակ» համալսարանի ռեկտոր, կրթության միջազգային ակադեմիայի տնօրենների խորհրդի նախագահ Անահիտ Հարությունյանը, արձագանքելով «Ազգի»՝ «Ձեր սխալը մե՞նք ոչի սրբագրենք» հրապարակմանը, որտեղ խոսքը վերաբերում էր Հայաստանի կրթական հաստատություններից վաճառված դիպլոմներին (ինչի մասին գրել էր սիրիական մամուլը), կտրականապես հերքեց, թե հրապարակման մեջ արծարծված խնդիրը կապ ունի «Հայբուսակի» հետ: «Հրապարակման հեղինակը որեւէ փաստ ունի՞: Եթե փաստ չկա տակը՝ դա պարզապես հերյուրանք է, ինչի դեմ մենք բոլորս պետք է պայքարենք», ասաց նա «Ազգի» հետ հեռախոսազրույցում:

Խնդիրը մանրամասնելու համար այցելեցինք համալսարան եւ ներկայացնում ենք նրա հետ մեր զրույցը:

- Բացարձակ մեզ հետ որեւէ առնչություն չունի Սիրիայից գրած հայի նամակը, որ տպագրվել է Ձեր թերթում, դեռ թերթի ճակատին էլ անհասցե, անփաստ տվել է «Հայբուսակի» անունը: Մենք տարիներով մեզ համար հեղինակություն չենք ձեռքբերել, որ ինչ-որ մեկը մեզ արդիրի անվանարկի: Նախ՝ մենք Սիրիայի հրապարակումներին էլ ենք շատ լավ ծանոթ առ այն, որ այլեւս մասնավոր բուհերի դիպլոմները Սիրիան չի ընդունելու, մինչեւ դրանց տերերը հատուկ կուրս չանցնեն: Սակայն սիրիական թերթերում «Հայբուսակի» հետ կապված որեւէ ակնարկ չի եղել, «Հայբուսակի» անունը որեւէ անգամ չի տրված:* Ընդհանուր դիտարկումներ են եղել՝ ուղղված այն բանին, որ պետական բուհերի դիպլոմներով միայն գան: Իսկ կեղծ դիպլոմի մասին խոսելն անգամ ավելորդ է, մենք այդպիսի պրոբլեմ չունենք: Օրինակ՝ Օդեսայում գտնվել է մի բնակարան, որտեղ աշխարհի բոլոր երկրների կեղծ փաստաթղթեր ու դիպլոմներ են սարքվել: Է, մենք ինչ իմանանք՝ մեր դիպլոմներից կեղծվել են, թե՞ ոչ: Հալեպցի հոդվածագիրը, առանց մասնանշելու կամ ստուգելու ինչո՞ւ է Հայաստանին խայտառակում: Եվ ինչո՞ւ է մեր անունն առաջին էջում հայտնվել՝ ոչ մի փաստ չմատնանշելով:

- Սակայն չեք ժխտում, որ Հայաստանի մասնավոր բուհի՝ հատկապես բժշկական հաստատությունների դիպլոմները Սիրիայում չեն ընդունվում:

- Դիպլոմը չընդունելու պրոբլեմը որ ծագեց Սիրիայում՝ մեր շրջանավարտներն էլ ձեռքերը ծալած չնստեցին, մի քանի անգամ դատական գործընթացներով բարձրացրել են հարցը, որոնց արդյունքում որոշում կայացվեց, որ մեկ տարվա տեղական կուրս պետք է անցնեն Հայաստանում կրթություն ստացածները, դա համար վճարեն եւ ապա քննություն անցնեն: Բայց դա արդեն իրենց երկրի խնդիրն է: Իսկ ընդհանրապես բժշկական կրթության դիպլոմը ողջ աշխարհում, ընդունված կանոններով դեռ հնարավորություն չէ բժիշկ աշխատելու համար, անպայման հետդիպլոմային կրթություն է պետք:

- Իսկ մասնավոր բուհի դիպլոմը չընդունելու խնդիրն ինչո՞ւ ծագեց Սիրիայում:

- Պատճառն ավելի քան ողբերգական է. Սիրիայի կառավարությունը երբ տեսավ, որ իրենց երիտասարդները մեծ թափով գալիս են Հայաստան, ոչ թե Վրաստան, ոչ թե Ադրբեջան, այլ հենց Հայաստան, հետեւությամբ ընդունվում-դժվարությամբ սովորում են մասնավոր բուհում, դժվարությամբ ավարտում են, որոշեց դրա դեմն առնել. նրանց երկու նախարարներից մեկն այսպիսի հաշվարկ է ցույց տվել մեզ, որ իրենց երիտասարդները տարեկան 7-8 հազար դոլար են ծախսում մեր երկրում, եդ յոթ հազարն այնտեղ կմնան ու կմնան այնտեղ. կրթության եւ առողջապահության նախարարները բացեցին իրենց մասնավոր համալսարանները:

- Բացառո՞ւմ եք մասնավոր բուհի դիպլոմավորի ցածր գիտելիքների գործոնն այս դեպքում:

- Ես Հայաստանում բազմաթիվ բուհեր գիտեմ, որտեղ ոչ միայն գիտելիք չեն տալիս, այլեւ ընդհանրապես խեղկատակություն է նման հաստատությունը բուհ կոչելը, բայց գնահատական տալն իմ գործը չէ. ես ընդամենը պարտավոր եմ իմանալ իրավիճակը, նույն դաշտում եմ աշխատում, եւ Դուք էլ գիտեք: Սակայն «Հայբուսակը» տարին տարվա վրա հեղինակություն է ձեռք բերել ողջ տարածաշրջանում հրանաջան աշխատանքի շնորհիվ, 3500 ուսանող ունի, 400 դասախոս, մի պատկառելի մասը գիտության դոկտորներ եւ թեկնածուներ են, եւ թերթը, առանց կոնկրետ մեզ հետ կապված փաստ մատնանշելու եւ առանց ստուգելու՝ նրանց հեղինակությանն է խփում:

- Այսինքն՝ ուզում եք ասել, որ հայաստանյան մասնավոր բուհերի դեմ ծավալվող արշավը՝ սիրիական շատ կոնկրետ շահագրգռությունների արդյո՞ւնք է:

- Այդպես էլ կա. դա մեզ ասել են տեղի բնակիչները՝ թե՛ արաբներ, թե՛ հայեր, եւ հալեպցի ձեր հոդվածագիրը ջուր է լցնում հենց նրանց ջրաղացին:

Երբ մեր համալսարանում սիրիացի ուսանողների թիվը շատ էր մեծացել, Սիրիայի կրթության նախարարությունից 4 հոգուց բաղկացած հանձնախումբ է եկել համալսարան, ուսումնասիրություններ է կատարել, դրական եւ շատ բարձր կարծիք է հայտնել «Հայբուսակ» համալսարանի մասին: Նրանք անցել էին բոլոր համալսարաններով, որտեղ թեկուզ մեկ սիրիացի էր սովորում, որի արդյունքում թե՛ իրենցից, թե՛ կրթության ոլորտի պատասխանատուներից շատ բարձր կարծիքներ եմք լսել մեր համալսարանի մասին: Եթե մենք հեղինակություն չվայելեինք, ցույց տալու բան չունենայինք կամ խուսափեինք ցույց տալու բաներից, մեր տարածաշրջանի բոլոր կրթական ցուցահանդեսներին մեզ մեծ սիրով չէին հրավիրի, հենց հիմա ԱՊՀ երկրների բարձրագույն կրթության ցուցահանդես է, մեր կրթության նախարարություն, հարգելի, Հայաստանից մասնակցում ենք 3 պետական բուհ եւ մենք: Մեր շրջանավարտները հաջողությամբ աշխատում են աշխարհի շատ երկրներում, հենց սիրիացի մոտ 100 շրջանավարտից (արաբ եւ հայ) տեղեկություն ունենք, որ լավ մասնավոր պրակտիկա են ծավալում, աշխատում նաեւ պետական համակարգում:

- Դուք հիմա սիրիացի ուսանող ունե՞ք:

- Անցած տարի ընդունվել են, այս տարի՝ ոչ:

- Պետական կառույցները մտահոգ չե՞ն, որ իրենց հավատարմագրած բուհը կանգնել է այն պրոբլեմի առաջ, որ նրա դիպլոմը Սիրիայում չի անցնում:

- Պետությանը մենք չենք դիմել, եւ ասեմ թե ինչու. որովհետեւ պետական օղակները տարին տասներկու ամիս մեզ մոտ ստուգումներ են անում, մենք նախարարության հետ աշխատում ենք, վերջապես տեղացի երեխաների համար ենք բացել մեր բուհը:

- Հիմա ո՞ւմ պրոբլեմն է դա:

- Դիպլոմը չընդունելու պրոբլեմով զբաղվել է ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը, կառավարության այլ օղակներ, բայց շատ վատ են զբաղվել, ուզեցել են ապացուցել, որ մեր երկրում հավատարմագրված մասնավոր բուհը տալիս է ճիշտ նույն դիպլոմը, ինչ պետականը, եւ դա ինչ-ինչ պատճառներով (ավելի շուտ՝ վերը մեր մատնանշած պատճառներով) չեն կարողացել: Որ սիրիացի ուսանողները սկսեցին գնալ Ռուսաստան, այլ երկրներ՝ դա պետք է պրոբլեմ լիներ նախեւառաջ մեր պետության համար, որովհետեւ սիրիացի ուսանողները մեզ մոտ 500 դոլար ուսման վարձ վճարելով՝ 5 հազար դոլարից ավելի ծախսում էին արտերլու ընթացքում, այդման տարեկան թողնում էին Հայաստանում: Հիմա չեն գալիս, որովհետեւ մեր պետությունում ոչ ոք չուզեց այս հարցով զբաղվել, քանի որ միջպետական պայմանագիրը չի աշխատում: Դրա համար կա նախարարություն, կա կառավարություն, Ազգային ժողով՝ թող զբաղվեն: Դա իմ պրոբլեմը չէ, որովհետեւ երբ մեր համալսարանը հիմնադրել ենք՝ չենք երազել, որ արտասահմանից ուսանողներ պետք է այնտեղ սովորեն, բայց հիմա էլ շատերը կան՝ Իրանից, Իրաքից, Լիբանանից, Սիրիայից ուսանողներ ունենք: Իսկ կեղծ դիպլոմների պրոբլեմը մերը չէ: Որ Սիրիայում կա հայ համայնք՝ ես դա շատ եմ կարեւորում. տարեկան երկու անվճար տեղ մենք տալիս ենք Սիրիայի հայկական համայնքին, բայց մինչեւ հիմա ընդամենը 4 ուսանող է զբաղեցրել այդ տեղերը՝ 10-ի փոխարեն:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**Դժբախտաբար սիրիական մամուլում առնվազն երկու անգամ նշվել է անունը, սակայն պատճառաբանելով, որ այն պետական հավատարմագրում չունի Հայաստանում, ինչը փաստորեն սխալ է: Խմբ.:*

Համագործակցության նոր հարթություններ

Ուշադիր պետք է լինել հատկապես մարդկային հարաբերություններում

Մասնավորապես սփյուռքի գործարար շրջանակների կապերը Հայաստանի հետ սերտացան վերջին տարիներին: Հայաստանն իր նոր պետականության կայացման ծանր շրջանում, անշուշտ, կդժվարանար, եթե չլիներ սփյուռքի օժանդակությունը՝ ֆինանսական եւ մարդկային ներուժի: Այսօր արդեն Հայաստան-սփյուռք հարաբերությունները զարգացման նոր փուլ են թեւակոխել: Մեր կողմից պասսիվ խնդրատուի դերն այլեւս ժամկետանց է. ճիշտ համագործակցությունը սփյուռքի հետ լավագույն արդյունքներ կարող է ունենալ: Այս առումով Հայաստան-սփյուռք 3-րդ համաժողովը որոշակի առաջընթաց է արձանագրել գործարար հարթությունում. ակնկալիքները գյուղական շրջանների վերականգնողական ծրագրի հետ է կապված: Համաժողովի մասնակիցների գերակշիռ մասը սփյուռքից էին:

Մեր զրույցն այսօր **Հարություն Պզտիկյանի** հետ է, որ ներկայացնում է Մխիթարյան միաբանությունը: «Որպես կազմակերպվածություն անսայթաք էր՝ մեծ պետություններու վայել, որպես բովանդակություն նույնպես ճոխ էր, մասնագետներու ներկայությունը գոհացուցիչ էր: Կփափագեի, որ Հայաստանն ավելի մեծ թիվով ներկայություն բերեր. առավելությունն Ամերիկային տված էին: Եթե ապագային կուզեմ առավել արդյունավետ դառնա, անհրաժեշտ է, որ սփյուռքը ներկայացուցչական ըլլա, այսինքն՝ մասնակցին գաղութը ներկայացնող անձեր»: Այս առումով նա օրինակում է ֆրանսահայ գաղութը, որ ընտրված ներկայացուցչություն էր ապահովել համաժողովին: Հայաստանին որպես կայացած պետության արժանի կառույց, նա համարում է սփյուռքի ներկայացուցչական մարմինը, որը կազմակերպվածություն եւ որոշակիություն կհաղորդի հանդիպումներին, հնարավորինս բացառելով տարերային ելույթներն ու երբեմն կամայական հարցադրում-առաջարկները, կապահովի նաեւ համաժողովի դռնփակությունը, ինչն ավելի շահեկան է դիտվում: Զրուցակցիս տպավորությամբ այս համաժողովը գործնական տեսակետից ավելի արդյունավետ էր. խոսքը գյուղական ծրագրին է վերաբերում (չնայած սփյուռքահայ որոշ կազմակերպություններ եւ անհատ-բարերարներ («Իզմիրլյան» հիմնադրամ եւ այլն) սանձնել էին գյուղացիական տնտեսություններին օժանդակելու պատասխանատվություն մինչ այդ) Հայաստանում մշակութային գործունեություն ծավալող Մխիթարյան միաբանությունն այս անգամ ներդրումներ է անելու տնտեսության մեջ: Վենետիկի նահանգի՝ գինեգործության արտադրությամբ հայտնի Կոնելիանո քաղաքի համագործակցությամբ նրանք աջակցելու են Վայոց ձորի մարզի Արենի գյուղում գինեգործության զարգացմանը եւ արտադրանքը միջազգային որակների հասցնելուն՝ նկատի ունենալով Հայաստանում սննդարդյունաբերության այս տեսակի ներկայիս առաջընթացը, օգտագործելով նաեւ իտալական գործարար շրջանակների հետ ունեցած իրենց կապերը:

Զրուցակիցս, որ Հայաստանում է անցկացնում տարվա մի մասը, շատ է շրջագայում երկրում եւ տեղյակ է գյուղական բնակչության հոգսերին ու կարիքներին: Հայաստանի պատմամշակութային հնավայրեր նրա բազմակի այցելություններն ունեն որոշակի նպատակ: Հայոց հոգեւոր ճարտարապետության բազմաթիվ կոթողների մասին նրա նկարահանած 16 ֆիլմերից շատերը ցուցադրվել են հայկական հեռուստատեսությամբ: Դրանք շուտով ներկայացվելու են Վատիկանի հանրահայտ «Տելեպայէ» հեռուստաալիքի հայկական ծրագրով, որով աշխարհի տարբեր վայրերում հայկական մշակույթն ու մեր պատմությունը ճանաչելի դարձնելու հնարավորություն կընձեռվի: Այս տեսակետից Հարություն Պզտիկյանը Հայաստանում տուրիզմի զարգացման լայն հեռանկարներ է տեսնում. «Նկատի առնելով Միջին Արեւելքի քաղաքական ոչ այնքան կայուն վիճակը եւ միեւնույն ատեն Հայաստանի համեմատաբար հանդարտ շրջանի մեջ գտնվելը, մեր երկիրը կրնա մեծապես զարգացնել տնտեսական երկրորդ ճյուղը, որու համար բոլոր տվյալներն ունի: Սխալ է մտածել, որ մեր երկրի զբոսաշրջության շրջանը 4 ամիս կտեւե, իրականին մեջ Հայաստանը կարելիություններն ունի ձմեռային զբոսաշրջությունը զարգացնելու, քանի որ արեւմուտքն այսօր գրեթե անմատչելի դարձուցած է իր ձմեռային կայանները: Սփյուռքի մասնագետները կարող են հայրենիքին ձեռք երկարել: Հաճելի դարձնելու համար զբոսաշրջիկին կեցությունը բավարար չէ հյուրանոցներու ու ռեստորաններու լավ մակարդակը, հարկ է խնամել մեր պատմական հուշարձանները՝ յուրատեսակ եւ անկրկնելի իրենց տեսակի մեջ: Սակայն անոնց վիճակը ներկայիս շատ փայլուն պատկեր չի ներկայացներ»:

3-րդ համաժողովին հնչած տարբեր տեսակետներից ավելի ուշագրավն սփյուռքի նախարարություն կազմավորելու եւ պատգամավորական թեկնածուի առաջադրության խնդիրն էր, որոնց իրականացումը բազում առումներով կապված է երկքաղաքացիության օրենքի ընդունման հետ. «Միջպետական հարաբերություններու ոչ այնքան դյուրին հարց մըն է, օրենքներ կան բազում, որ կկարոտին իրավագետներու ուսումնասիրության: Սակայն հարցը այլեւս հրատապ է, կարելի չէ ձգձգել»:

Ուշադրության է արժանի նաեւ զրուցակցիս այն դիտարկումը, թե տեղացի մտավորականները համահայկական վերաբերմունք ունեն սփյուռքահայերի հանդեպ: «Սրահին մեջ հավաքածները ամբողջ սփյուռքը չէին ներկայացներ, մենք շատ արժանավոր մտավորականներ ու հայրենասերներ ունինք: Պետք է նկատի առնել այս հանգամանքը, ուշադիր պետք է ըլլալ...»:

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԲԱԴԱԼՅԱՆ,

Հոլոքոսթի եւ Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված նոր հուշարձան Երեւանում

Հայաստանի հրեական համայնքը հոկտեմբերի 27-ին Երեւանի օղակաձեւ զբոսայգում կբացի Հոլոքոսթի զոհերին նվիրված նոր հուշարձանը, որը կտեղադրվի 1999 թվականին բացված հուշաքարին կից՝ Մոսկովյան-Թումանյան խաչմերուկի հարեւանությամբ: Հրեական համայնքի ղեկավար **Ռիմա Վարժապետյանի** ասելով, նոր հուշարձանը հագվագյուտ է այն առումով, որ նվիրված է ոչ միայն հրեական Հոլոքոսթի, այլ նաեւ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին՝ ամրոցացնում է դաժանորեն ոչնչացված այս 2 ժողովուրդների տառապանքները:

«Մենք անչափ շնորհակալ ենք Հայաստանի իշխանություններից՝ Հոլոքոսթի զոհերին նվիրված հուշաքարի համար 1999 թվականին տեղ հատկացնելու համար: Դրանից հետո ինձ հանգիստ չէր տալիս նույն տեղում 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը կրած հայ ժողովրդի եւ Երկրորդ աշխարհամարտի ժամանակ Հոլոքոսթի ենթարկված հրեաների հիշատակը հավերժացնող նոր հուշարձան տեղադրելու միտքը: Ցավազանց գոհ եմ եւ երախտապարտ, որ այդ գաղափարը իրականություն դարձավ Հայաստանի հրեական համայնքի, Հանրապետական կուսակցության, «Նուշիկյան» ընկերակցության եւ այլոց աջակցությամբ», ասում է Ռիմա Վարժապետյանը:

Հուշարձանի բացմանը կհրավիրվեն մեծ թվով հյուրեր տարբեր երկրներից, կանցկացվի կլոր սեղան՝ քննարկելու 20-րդ դարի ցեղասպանությունների հետեւանքները: «Մենք կամենում ենք եւս մեկ անգամ ապացուցել, որ Հայաստանում ապրող հրեաները ձգտում են միայն օգտավետ գործեր կատարել եւ երկրին վնասելու ոչ մի նպատակ չունեն: Հուսով ենք, որեւէ չարագործ չի հանդգնի պղծել այդ հուշարձանը, քանի որ այն նվիրված է բարբարոսությունների զոհ դարձած ժողովուրդների հիշատակին», կարծում է հրեական համայնքի ղեկավարը:

Ռ. Պ.

Հետ-Արագածոտն

Հեռաքննող լրագրողներ

«Այս պահին 3 մլն դրամի հայցապահանջ կա մեր դեմ: Դատարանն էլ, չգիտեմ ինչ օրենքով, միանձնակ բավարարում է եւ ուղղակի ֆանդում այս գյուղը: Ցիաբված, որ հարկային տեսչությունն էլ իր հերթին է այս պահին դիմել դատարան, որովհետեւ մենք աշխատավարձ չենք ստանում, սոցվճարները չենք կարողանում փոխանցել, իսկ դա դիմաց տուգանք է գալիս՝ 64.300 դրամ պարտք ունենք»,- ասում է Արագածոտնի մարզի Զովասարի համայնքապետարանի հաշվապահ Վարդգես Ղազարյանը:

Նա պատմեց, որ 2005 թ. աշնանը Զովասարում համայնքապետ է ընտրվել Կիրակոս Պողոսյանը: Նա իր նախորդից 14 մլն դրամ պարտք է ժառանգել, որից 9 մլն դրամը աշխատավարձի պարտքեր են, 5 մլն-ը՝ սոցվճարի: «Մենք հիմա շատ ողորմելի մի բյուջե ունենք՝ մոտ 5 մլն, որից 2 մլն 300 հազարը դոտացիան է, մնացածը գանձում ենք պահուստային հողերի վարձակալությունից, սեփականաշնորհված հողերից: Տարվա կտրվածքով տրված դոտացիան ու հողերի հարկերն արդեն փոխանցել ենք այդ պարտքերին՝ վերջացել է»,- համայնքապետարանի անելանելի վիճակն է ներկայացնում հաշվապահը:

Զովասարի նախորդ համայնքապետ Մարտին Վարդանյանը դիմել է դատարան 1,5 մլն դրամ աշխատավարձի պարտքի վճարման պահանջով: «Ինքը ժամանակին չի աշխատել, այսօր մեր դեմ հայց է ներկայացնում, էն դեմքում, որ նա է այդքան պարտքը կուտակել»,- նախորդ համայնքապետի վարքագիծն է ընդգծում հաշվապահը: Նա նշեց, որ այն ժամանակ վեց աշխատող է ունեցել համայնքապետարանը, նաեւ պահակ է ձեւակերպված եղել, որը հայտնի չէ, թե ինչն է պահել, բայց նա նույնպես դիմել է դատարան աշխատավարձի պահանջով: «Հարկահավաքություն գրեթե չեն իրականացրել՝ մոտ 5-7 % չափով, որը մարդկանց կողմից էլ յուրացումներ են եղել. մնացած գումարը դուրս են գրել վառելիքի անվան տակ»,- նշեց նա: «Դպրոցի համար իբրեւ վառելիք են բերել, ձմռան սեզոնն սկսվում է նոյեմբերին, իսկ վառելիքը դպրոց է հասել մարտին»,- հաշվապահի միտքը լրացնում է զրույցին ներկա ռազմագիտության ուսուցիչ Համլետ Մինասյանը:

Համայնքապետ Մարտին Վարդանյանի հաջողված փորձն ընդօրինակել են նաեւ նրան նախորդած համայնքապետն ու իր աշխատակիցները. դատարան դիմելով՝ պահանջել են վճարել 1997թ. մնացած աշխատավարձային պարտքերը: Հաշվապահին զարմացրել է այն հանգամանքը, որ նրանք իրենց հաջորդից՝ Մ. Վարդանյանից, չեն պահանջել աշխատավարձի պարտքերը մարել եւ միայն հիմա են մեկ առ մեկ դիմում դատարան, դատարանն էլ բավարարում է: «Մոտ 3 մլն էլ առաջին շրջանի աշխատողների պարտքն է: Աշխատավարձ ստացել են՝ սոցվճարը փոխանցել են, չեն ստացել՝ չեն փոխանցել»,- հավելեց նա:

Հաշվապահի ասելով պարտքերը կուտակվել են, որովհետեւ նախկին երկու համայնքապետերը չեն հավաքել հողի հարկերը, դոտացիայից հինգ-վեց ամիս աշխատավարձ են տվել, մնացածը պարտք են մնացել: Նրանց գործելաոճի հետեւանքով մարդիկ կորցրել են հավատը եւ հիմա շատ դժվարությամբ են հարկ հավաքում: Անցյալ տարի երկու ամսվա ընթացքում մոտ 300 հազար դրամ են հավաքել, իսկ նրանք՝ որոշ տարվա ընթացքում՝ 100 հազար էլ չեն հավաքել: «Ամեն ամիս սնկի պես աճում են ե՛ւ սոցվճարի, ե՛ւ աշխատավարձերի պարտքերն ու տոկոսները: Այնպես խիստ է դրված այդ հարցը, որ, օրինակ, մենք ունենք պետպատվերով աշխատող անասնաբույժ, որի աշխատավարձը պետությունն է եռամսյակը մեկ փոխանցում մեզ: Հիմա հաշվի չեն առնում, որ նա համայնքապետարանի հետ կապ չունի, նրա աշխատավարձը սանձելու համար, ոմանք այդ պահանջով ուղղակի իրեն են դիմում: Նա էլ դիմել է կառավարությանը աշխատավարձերի պարտքերը մարելուն աջակցելու համար:

Մասնագիտությամբ ֆինանսիստ Արեւշատ Մկրտչյանը, սակայն, չպատասխանելով կառավարության պատասխանին՝ այդ իրավիճակից դուրս գալու յուրօրինակ լուծում էր գտել: «Հաշվեցի, որ տարվա կտրվածքով 1 մլն 100 հազար դրամ է կազմում պարտքերի մարումը, որն իմ աշխատած ժամանակահատվածում հազիվ կարողանամ փակել, իսկ հաջորդին արդեն ես կփոխանցեմ իմ պարտքերը: Որոշեցի խուսափեմ այդ վիճակից՝ ցածրացրել եմ աշխատավարձերի չափերը, նախկին 30, 40, 50, 60, 100 հազարի փոխարեն 10, 20, 30.000 դրամ աշխատավարձ եմ սահմանել»,- ասաց Ծաղկասարի համայնքապետը:

Զորավանի համայնքապետարանի հաշվապահ Վարդգես Ղազարյանը մոտ մեկ տարի անվարձահատույց է աշխատում եւ հաշվարկել է, որ դեռեւս երեք տարի էլ աշխատավարձ չեն կարող ստանալ մինչեւ նախորդ աշխատակազմերի աշխատավարձերի պարտքերը մարելը

Սյունիքի մարզի Սիսիանի վարչատարածքի Աշոտավան գյուղի համայնքապետ Արեւիկ Օհանյանը տեղեկացրեց, որ մեկ տարի առաջ, պաշտոնն ստանձնելու հետ մեկտեղ, 12 մլն դրամ պարտք է ժառանգել՝ 5 մլն դրամ սոցվճարներ եւ 7 մլն դրամ աշխատավարձային պարտք, որի պատճառով համայնքի բյուջեային հաշիվը կալանքի տակ է: «Համայնքապետից մինչեւ պահակ՝ 12 հոգի, դիմել են դատարան աշխատավարձի պարտքերը մարելու պահանջով: Հիմա հարկերը հավաքում եմ ու նրանց պարտքերն եմ փակում: Աշխատավարձի պարտքերն արդեն մարում եմ, մնացել է 600 հազար դրամ»: Արեւիկ Օհանյանը հայտնեց, որ 1997թ.-ից հողի հարկ չեն հավաքել եւ 32 մլն-ի պարտք է կուտակվել: «Աշոտավանին հատկացված տարեկան դոտացիան 1,5 մլն է, հարկերը՝ 2,7 մլն: տարվա հարկերը հավաքում եմ, նախորդ տարիների պարտքերից էլ եմ հավաքում ու նրանց պարտքերը մարում, մենք աշխատավարձ չենք ստանում: Ժողովուրդն էլ հիմա վճարունակ չի, գումար չունեն, երբեմն նրանց լրիվ հրապարակեց, նրանք կարո՞ղ են հողի վարձ տալ»,- հարցնում է տիկին Օհանյանը: Համեմատության համար ասենք, որ Աշոտավանի համայնքապետարանում հիմա 4 հոգի են աշխատում:

Ուռճացված աշխատակազմեր ունենալը՝ աշխատավարձերի ուռճացված ու չհաշվարկված ցուցակներով, ընտրազանգվածին չկորցնելու մտայնությամբ հարկերը գիջելը համայնքապետերից շատերին է հատուկ: Սակայն ցավալին այն է, որ այս երեւույթը, իր բոլոր հետեւանքներով, չի անհանգստացնում կառավարությանը:

Այս խնդիրն իր հանգուցալուծումը չի գտնի այնպես ժամանակ, մինչեւ կառավարությունը չորոշի ի վերջո արդիականացնել բյուջեների հրապարակայնության մասին ընդունված օրենքի կիրառումը, որը յուրաքանչյուր պաշտոնյայի կիարկադրի պատասխանատվություն կրել իր պաշտոնավարած ժամանակի եւ իր տնօրինած գումարների համար: Պատահական չէ, որ այն հակակոռուպցիոն միջոցառումների ցանկում է տեղ գտել, սակայն պարզվում է՝ ոչ իրականացնելու միտումով:

«Հակակոռուպցիոն ռազմավարության եւ դրա իրականացման միջոցառումների ծրագրի» ժամանակացույցի համաձայն 2004-06 թթ.-ին նախատեսված էր «Համայնքային բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ ամբողջական տեղեկատվական համակարգի ներդրում», որի նպատակն է արդյունավետ դարձնել համայնքային բյուջեների դոտացիաների եւ սուբսիդիաների իրացումը: Կատարման պատասխանատվությունը դրված է ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի եւ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունների վրա: Սակայն, ինչպես պարզ է դառնում նրանց վերաբերմունքից, մտադրություն չունեն իրականացնելու իրենց սանձած պարտավորությունը:

Նշված հարցի վերաբերյալ բացատրություն ստանալու ակնկալիքով դիմեցինք երկու նախարարներին: Տարածքային կառավարման նախարար Հովիկ Աբրահամյանը հարկ չհամարեց պատասխանել մեր գրությանը, իսկ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունը, մեր հետեւողականությանը տեղի տալով, բավականին ուշացումով (գրությանը պատասխանել է նախարարության աշխատակազմի ղեկավար Ռ. Գետրգյանը) պատասխանել է. «ՀՀ կառավարության 06.11.03թ. թիվ 1522-Ն որոշմամբ նախատեսված «Համայնքային բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ ամբողջական տեղեկատվական համակարգի ներդրում» միջոցառման շրջանակներում Կենտրոնական գանձապետարանի կողմից յուրաքանչյուր եռամսյակ համայնքների բյուջեների կատարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն է տրամադրվում ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը եւ հրապարակվում է ՀՀ Ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում»:

Իսկապե՞ս այդ էր նկատի ունեցել Հակակոռուպցիոն ռազմավարությունը հաստատող երկրի բարձրագույն ղեկավարությունը՝ միջոցառումների ցանկում այդ պահանջն ընդգրկելով: Վիճակագրական ծառայությանը տրամադրելը եւ նախարարության ինտերնետային կայքում բարդ թվաբանական հաշվարկներ զետեղելն, արդյո՞ք, նշանակում է համայնքային բյուջեների հրապարակայնության ու թափանցիկության ապահովում եւ այդ միջոցով մարզային բնակչության համար վերահսկելի դառնո՞ւմ են բյուջետային ծախսումները:

ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային կառավարման վարչության պետ Խաչատուր Վարդանյանը հավաստիացրեց, որ հաշիվների վրա արգելանք դրված 54 համայնքների մեծ մասի հարցն արդեն լուծված է: «Կառավարությունը հասկացրել է օգնության կարգով, որպեսզի նրանք կարողանան բյուջեն հանել արգելանքից: Ինչպե՞ս կարող է համայնքի բյուջեն արգելանքի տակ լինել եւ մենք անտարբեր գտնվենք այդ հարցի նկատմամբ: Մենք պարբերաբար լուծում ենք այդ հարցերը»:

Կառավարությունից այս հարցում աջակցություն են ակնկալում նաեւ Վարդենիսի վարչատարածքի 27 գյուղերի ղեկավարները, որոնք, առանց պետական միջամտության, հարցի լուծումը չեն պատկերացնում: Ինչպի՞սի լուծում կարող է տալ հարցին Վարդենիսի վարչատարածքի Խաչաղբյուրի համայնքապետը, որի տարվա դոտացիան 3 մլն դրամ է, իսկ նա նախկին համայնքապետից 21 մլն աշխատավարձի պարտք է ժառանգել: Վարդենիսի վարչատարածքի համայնքապետերի ասելով՝ այս պատկերն իրենց վարչատարածքի գրեթե բոլոր գյուղերում նույնն է: Պրն. Վարդանյանը, սակայն, պատրաստ չէր պատասխանելու, թե ինչ լուծում է նախատեսված Վարդենիսի համայնքների համար:

Միթե՞ պարբերաբար պետական միջոցներից այս կամ այն համայնքին աջակցելը հարցի լուծում կարող է համարվել: Չէ՞ որ նույն իրավիճակը պարբերաբար կրկնվում է այս կամ այն գյուղում եւ ստացվում է, որ բնակչությունը ոչ միայն ընտրության ճանապարհով չի կարող ազատվել անգործունյա համայնքապետից, այլեւ նրանից ազատվելուց հետո էլ պետք է շարունակի դրամահավաքով «պարգեւատրել» իրեն արհամարհած ու համայնքի ունեցվածքը յուրացրած համայնքապետին:

ՍԵՌՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Համայնքապետերը գյուղը շենացնելո՞ւ համար են, թե՞ քանդելու

Կառավարության տվյալներով արգելանքի տակ է 54 գյուղի բյուջե, մեր տեղեկություններով դրանց թիվը շատ ավելին է

Հիմա ո՞վ պետք է մաքուր պահի մեր քաղաքը

20 հազարից ավելի բնակիչ ունեցող (պաշտոնական աղբյուրների հավաստմամբ) Գորիս քաղաքից դուրս տարվող օրական 24 տ կենցաղային եւ շինարարական աղբը դասակվում է Լաստի խութ սարի ստորոտում, քաղաքից ընդամենը 3 կմ հեռավորության վրա գտնվող աղբավայրում, որն ուղիղ գծով մի քանի հարյուր մետր է հեռու քաղաքի հարավային հատվածի բնակելի թաղամասից: 35 հա կազմող տարածը, որը, որպես կենտրոնական աղբավայր, հատկացվել է 70-ական թվականներին, այժմ ոչ միայն չի համապատասխանում սանիտարական կանոններին, այլեւ, չունենալով պաշտպանիչ ցանկապատ, դարձել է տարբեր կենդանիների «արոտավայր»:

Ավելին, որոշ մարդիկ տեղական իշխանությունների, հակահամաճարակային ծառայության աչքի առաջ խոզաբուծական երկու անասնագոմ են կառուցել հենց աղբավայրի կենտրոնում, եւ մսի արտադրությամբ զբաղվող ֆերմերը, հավանաբար, ոգեւորված, որ բնապահպանական վերահսկողության մասին օրենքն այստեղ չի կիրառվում, սպառողին է հրամցնում քաղաքի աղբավայրում «կերած-խմած խոզերի» մսամթերքը: Բնականաբար, այս դեպքում խոսք չի կարող լինել թափոնների վերամշակման մասին, որովհետեւ դա արդյունքում աղբավայրում մշտական բնակություն հաստատած մոտ երկու տասնյակ խոզեր սովամահ կլինեն, իսկ աղբավայրի հարեւանությամբ գտնվող Գորիս գյուղ թաղամասի ընտանի կենդանիները կզրկվեն կերից:

«Գորիս ՏՆՏ» ՓԲԸ տնօրեն Սեյրան Գեւորգյանի վկայությամբ աղբավայրը պարբերաբար ծածկվում է հողով կամ այրվում, ինչը միչ հավանական է, քանի որ մասնագետների կարծիքով նման թեքության վրա գտնվող տարածքում հողածածկման կամ այլ մշակման աշխատանքներ հնարավոր չէ իրականացնել: Քաղաքի աշխարհագրական դիրքով պայմանավորված, օրվա տարբեր ժամերի, մասնավորապես՝ գարնանը եւ աշնանը, հարավ-արեւելքից դեպի քաղաք փչող քամին աղբավայրի այրելու ընթացքում տարանջատված քիմիական նյութերից արտազատված թունավոր գազերը հասցնում է մոտակա բնակելի շենքերին, իսկ, որ ամենատգնապալին է՝ ուղիղ գծով շատ մոտ գտնվող դպրոցին, որտեղ սովորում է 600-ից ավելի աշակերտ: Բացի այդ, անձրեւաջրերի հետ աղբավայրից աղբը հասնում է մինչեւ քաղաքամերձ այգիներ, մշակելի հողատարածքներ:

Համայնքային իշխանությունը Գորիս քաղաքի աղբահանության համար տարեկան հատկացնում է 16 միլիոն դրամ, եւս 4 միլիոն՝ քաղաքի կանաչապատման, ածխաբեռ շերտի սպանդի համար: Աղբահանությունն իրականացնում է բաց թափով ընդամենը չորս ավտոմեքենայով, որոնք շահագործման մեջ են յոթանասունական թվականներից, աշխատում են ոչ ամեն օր եւ քաղաքի աշխարհագրական դիրքի պատճառով ոչ բոլոր փողոցներից են կարողանում աղբ տեղափոխել: Այդ պատճառով քաղաքի տարբեր փողոցներում տեղադրված աղբամանները ֆիզիկական ծավալներով նորմայից ավելի են բեռնավորվում: Առանց այն էլ դրանք տեղադրված են հիմնականում ջրահեռացման առուների եւ գետի եզերքին, եւ գերծանրաբեռնվելով աղբի մեծ մասը թափվում է Վարարակն գետը:

Համեմատության համար նշենք, որ Գորիսի հետ բարեկամական կապ հաստատած եւ գրեթե հավասար բնակչություն ունեցող Վիենի (Ֆրանսիա) քաղաքային տնտեսության մեջ աղբահանության, ջրամատակարարման, լուսավորության աշխատանքները կազմակերպելու գործում ընդգրկված է 650 մարդ, իսկ Գորիսում՝ միայն աղբահանության ոլորտում աշխատում է 17 հոգի: Վերջերս ԱՄՆ ՄԶԳ «Բրիջ» ծրագրի շրջանակներում Գորիս քաղաքում տեղադրվել է 30 աղբարկղ՝ նպատակ ունենալով բարելավել աղբահանության գործընթացը:

Նրանք, ովքեր գոնե մեկ անգամ եղել են Գորիսում, հազիվ հավատան, որ որքան բնությունը շռայլ է եղել քաղաքին անձեռակերտ շնորհներով օժտելիս, նույնքան մարդկային ձեռքն անփույթ ու անտարբեր է դրանց գնահատման, շահագործման, պահպանման առումով: Փաստ է, որ Գորիսն այսօր կանգնած է բնապահպանական աղետի առաջ, եւ դա պայմանավորված է ամենից առաջ նրանով, որ քաղաքում աղտոտող նյութերի արտանետումների ինտենսիվությունը գերազանցում է շրջակա միջավայրի՝ այն կլանելու եւ չեզոքացնելու հնարավորությունները:

Խոսքն ամենից առաջ վերաբերում է նրան, որ Գորիս քաղաքում այժմ գործող կոյուղու կոլեկտորը չի համապատասխանում սանիտարական պայմաններին: Ավելին, այն 13 տեղում շեղվում է հիմնական գծից եւ լցվում քաղաքի բնակելի թաղամասով հոսող Վարարակն գետը, իսկ վերջնական կետում՝ առանց վնասազերծվելու թափվում Սալ քար թաղամասի բնակելի վերջին տնից ընդամենը 100 մ այն կողմ՝ ստեղծելով ոչ միայն հակասանիտարական վիճակ, այլեւ լուրջ վտանգ ներկայացնելով մարդկանց առողջության համար:



Որտեղի՞ց իմանա սպառողը, որ ֆերմերն իրեն հրամցնում է քաղաքի աղբավայրում կերած-խմած «անարատ» խոզերի միսը:

Դեռեւս խորհրդային ժամանակներում քաղաքի կեղտաջրերը կենսաբանական մաքրման ենթարկելու համար քաղաքի հարավային մասում՝ Քարահունջ գյուղից դեպի գլխավոր աղբավայրը: Եվ այն, որ ցածր է մարդկանց էկոկուլտուրան, եւ հանրությունը լիարժեք իրազեկված չէ թափոնների վտանգավորության մասին, վկայում է եւ այն փաստը, որ գետի երկայնքով ձգվող բնակելի տների բնակիչները չեն խնայում անգամ իրենց, գետն են լցնում կենցաղային աղբը:

Այսքանից հետո, անիմաստ է խոսել այն մասին, որ տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են օրենքով իրենց վերապահված պարտականությունները. այն է՝ մշակում են թափոնների կառավարման կարճաժամկետ, միջնաժամկետ եւ երկարաժամկետ ռազմավարական ծրագրեր, ըստ այդ ռազմավարության հաշվի առնում ապագա թափոնների կանխանշված քանակը, տեսակները, թափոնների ծավալների նվազեցումը: Իհարկե, լավագույն տարբերակներից մեկը բնակիչների մեջքով գոյացող թափոնների ընդհանուր քանակի կրճատումն է: Սակայն ակնհայտ է, որ դրանց ծավալներն օրեցօր ավելանում են: Ոչ պաշտոնական վիճակագրական տվյալներով յուրաքանչյուր ամիս միայն Գորիս քաղաքում սպառվում է մոտ 6 տ պոլիէթիլենային պարկ (սպասարկման կետերն այն ձեռք են բերում կիլոգրամներով), որը, բնականաբար, ոչ մի տեղ չի անհետանում, իսկ աղբավայրերում դրանք քայքայվում են 100 տարում:

Թափոնների օգտագործման ոլորտում աշխարհում վաղուց արդեն տարածված է Կոմպոստինգի երեւույթը, ըստ որի՝ մարդու անմիջական միջամտությամբ օրգանական թափոնները վերածվում են բնական պարարտանյութի: Դրա նախադեպը եղավ նաեւ Գորիս քաղաքում. գյուղատնտեսական գիտությունների թեկնածուն իր իսկ այգում հորելով տան կենցաղային աղբը, կարողացել է հողամասի մեկ տարվա համար անհրաժեշտ պարարտանյութ ստանալ: Ի դեպ, այս կերպ հնարավորություն է ստեղծվել խուսափել նաեւ քիմիական բաղադրություն եւ էկոլոգիապես մեծ վտանգավորություն ունեցող տարբեր քիմիական դեղամիջոցների միջոցով գյուղմթերքների արտադրությունից: Մինչդեռ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի բնապահպանության, գյուղատնտեսության վարչության տվյալներով միայն Գորիս քաղաքում տարեկան սպառվում է մոտ 450 տ ազոտական պարարտանյութ:

Վերջին տարիներին գովազդի լայնածավալ աշխատանքներ են իրականացվում գյուղատնտեսության ոլորտում տարբեր բուժամիջոցների, թունաքիմիկատների, սերմերի ախտահանման ուղղությամբ, եւ չկա երաշխիք, որ դրանք անվտանգ են մարդու առողջության համար: Մանավանդ որ, հաճախ այդ բուժամիջոցներն անհայտ ծագում ունեն: Ընդամենը երկու տարի առաջ Գորիսին հարակից Տեղ գյուղում սիմազին կոչվող դեղանյութի պատճառով ոչնչացվեց մոտ 300 հա հացահատիկի դաշտ, այդ մասին կազմվեցին համապատասխան արձանագրություններ, սակայն որեւէ մեկը չհաշվարկեց, թե, այնուամենայնիվ, ինչպիսի՞ ազդեցություն ունեցավ այն մարդկանց առողջության վրա, որոնց ցանքատարածությունները մասամբ էին վնասվել, եւ նույն դաշտերից ստացված ցորենն օգտագործվեց հացարտադրության մեջ:

Մկնանման կրծողների դեմ իրականացվող պայքարում լայն տարածում է գտել նաեւ ցինկի ֆոսֆիդի կիրառումը: Վերոնշյալ աղբյուրի տվյալներով միայն անցած տարի քաղաքի մշակովի տարածքների համար օգտագործվել է 200 կգ-ից ավելի ցինկի ֆոսֆիդ: Համեմատության համար նշեմ, որ դա 1 կիլոգրամը ջրային ավազանի մեջ խառնելու դեպքում կարող է մահացու հետեւանք ունենալ ամբողջ քաղաքի բնակչության համար: Եվ զարմանալին այն է, որ մարդիկ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում այդ դեղամիջոցը ձեռք բերելու հարցում՝ առանց իրազեկվելու, թե ինչ վնասակար ազդեցություն կարող է ունենալ այն իրենց առողջության վրա: Պատճառն, իհարկե, այն է, որ բնակլիմայական անբարենպաստ պայմանների, մասնավորապես՝ երաշտի պատճառով մարդիկ ստիպված տարբեր բուժամիջոցներ են օգտագործում, որպեսզի փոքր-ինչ ավելանա գյուղմթերքների արտադրության ծավալը:

Քաղաքային իշխանությունների, հակահամաճարակային ծառայության աչքի առաջ խոզաբուծական երկու անասնագոմ են կառուցել Գորիսի կենտրոնական աղբավայրում:

Գորիսի նախկին բանտապետն իր վերմիքելի արտադրամասի թափոնների համար աղբավայր է ընտրել քաղաքի միջով անցնող Վարարակն գետը:

Գորիսի Ռ. Յոլյանի անվան հիվանդանոցի տնօրեն, բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Սլավիկ Ամիրյանին մտահոգում է այն, որ քաղաքում վերջին տարիներին շրջակա միջավայրի աղտոտման հետ կապված տարբեր հիվանդությունների, մասնավորապես, ուռուցքների, օրգանական փոփոխություններով սրտանոթային, ինսուլտների աննախադեպ աճ է գրանցվել: Սյունիքը հանրապետության այն մարզերից է, որտեղ բնակչության թվի հետ համեմատած ուռուցքային հիվանդությունների թիվը 60-70 %-ով ավելի բարձր է, քան՝ մյուս մարզերում: Բժշկի կարծիքով այն հիմնականում պայմանավորված է բնապահպանական խնդիրներով, այն հանգամանքով, որ Սյունիքը սեյսմիկ գոտի է, ուր նաեւ ճառագայթային ֆոնը բավականին բարձր է: Պատերազմը, մշտական հոգեբանական սթրեսը, տագնաքը այն հիմնական պատճառներն են,

Տես Գ էջ

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Հետք-Կայոց ձոր

Վայոց ձորի մարզի բարձրաբերձ ժայռերի ստորոտում գտնվող Արտաբույնք գյուղը (նախկինում՝ Եղեգիս) 1800 տարվա պատմություն ունի: Գյուղը եզերված է ժայռերով, որին գլխավերեւից իշխում է Սմբաս թագավորի ամրոցը՝ Սմբատաբերդը: Ժայռերը որոշ տուժ են հաղորդում գեղեցիկ բնապատկեր ունեցող գյուղին, այնուամենայնիվ դժվարացրել են բնակիչների կյանքը: Դեռեւս անցյալ դարի կեսերից ժայռերից պոկված հսկա քարաբեկորները մեծ թափով գլորվում են գյուղի ուղղությամբ՝ ստորոտում գտնվող տների բնակիչներին մշտապես պահելով կանխահաս աղետի վտանգի տակ:

Համայնքապետը մտահոգվում էր, որ երիտասարդները ինֆորմացիայի աղբյուրներից զրկված են, թերթ առանձնապես չի մտնում գյուղ: Հեռուստատեսությունից էլ են զրկված, որովհետեւ թափառող ալիքների հույսին են, որը մերթ կա, մերթ՝ ոչ: Միայն «Հ1» ծրագիրն են որոշ չափով դիտում: «Դրանից էլ հոգնել են, օրը 4-5 ժամ սերիալ են դնում, երիտասարդությունը ի՞նչ սովորի: Չկա էն աղբյուրը, որից հնարավոր լինի լուրջ բաների հետ առնչվել»,- երիտասարդության դժգոհությունն է փոխանցում պրն Սեդրակյանը:

Չնայած ստեղծված հնարավոր պայմաններին՝ գյուղից, այնուամենայնիվ, երիտասարդության մեծ

«Ծառերը մեզ փրկում են քարաթափման անկանխատեսելի հետեւանքներից»

Բնակիչներն ինքնաբուսական նպատակով խիտ շարքերով ընկուզենու ու տանձենու ծառեր են տնկել տների ետնամասում: Գարնան ձնհալերի ու աշնան անձրեւների ժամանակ, սակայն, հիմից թուլանալով՝ քարաբեկորները առավել մեծ քանակով ու չափերով են պոկվում եւ ահռելի դղրդյունով ու մեծ արագությամբ բախվում հասարակ ընկուզենիներին ու տանձենիներին, ճեղքում դրանք, հաճախ էլ հասնում տների մերձակայք: «Քարերի գահավիժման ձայնից սարսափում ենք, ծառերը մեզ ուղղակի փրկում են: Քնում ենք՝ չիմանալով, թե մեզ հետ ինչ է լինելու»,- ասում է բնակչուհիներից մեկը, որի տան ետնամասը լի է նման ժայռաբեկորներով:

Բնակիչները ժայռաբեկորներից պաշտպանվելու նպատակով խիտ շարքերով ընկուզենու ու տանձենու ծառեր են տնկել տների հետնամասում:

Գյուղացիներն այսօր էլ ցավով են հիշում իրենց համագյուղացիների ողբերգական մահը: 1953թ. հսկա ժայռաբեկորը, գիշերը գահավիժելով տան ուղղությամբ, ուժգին բախվել էր տանը: Ամուսինները մահացել էին, իսկ նրանց որդին հաշմանդամ է դարձել եւ առայսօր գամված է սայլակին: «Այդ դեպքից հետո ընտանիքի մյուս անդամները տեղափոխվեցին գյուղից, իսկ մենք ընում ենք՝ չիմանալով՝ հաջորդ օրը լույսը բացվելո՞ւ է մեզ վրա, թե՝ ոչ»,- ասում է համայնքապետարանի քարտուղար Գեւորգ Գեւորգյանը:

Ժայռի ստորոտին գտնվող տների թիվը 28-ն է: Արտաբույնքի համայնքապետ Սամվել Սեդրակյանի ասելով՝ իրենք բազմիցս դիմել են համապատասխան մարմիններին այդ տները գյուղի մեկ այլ հատված տեղափոխելու համար: Հարցը մշտապես քննարկվել է տարբեր ատյաններում, բայց ընթացք չի տրվել: «Քաղաքաշինության նախարարությունը մոտ երեք տարի առաջ խոստացավ փուլ առ փուլ կազմակերպել 28 ընտանիքի տեղափոխումը: Նախատեսվում էր դրամական փոխհատուցում տրամադրել սեփականաշնորհված հողերի վրա նոր տուն կառուցելու համար, իսկ ովքեր հողամաս չունեն՝ հող կամ տուն կգնեն: Գործընթացն սկսված է համարվում 2001թ.-ից, սակայն մինչ օրս ոչին չի արվել»,- ասում է համայնքապետը: Նա տեղեկացրեց, որ կառավարությունից ամեն տարի խոստանում են հաջորդ տարվա բյուջեում նախատեսել փոխհատուցումը, բայց խոստումը մի բյուջեից մյուսին է փոխանցվում: Համայնքապետը խիստ թերահավատ է, որ 2007թ.-ի բյուջեից իրենց էլ դրամ բաժին կհասնի, չնայած այդպիսի խոստում դարձյալ տրվել է:

Այսուհանդերձ, համայնքապետը նշեց, որ գյուղի համար մի շարք այլ կարեւոր հարցերի կարողացել են լուծում տալ: Նա ներկայացրեց, որ, սկսած 1997 թ.-ից, իրենք, տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցելով, կարողացել են գյուղի համար խիստ կենսական՝ խմելու եւ ոռոգման ջրերի խնդիրը մասնակի լուծել: «Գյուղի ռելիեֆն այնպիսին է, որ ամբողջովին խորխորատներ ու ձորեր են, 5 կմ երկարությունն է, 350 մ էլ բարձրության տատանում ունի, գյուղի վերջնամասում բարձրությունը 1750 մ է, իսկ սկզբնամասում՝ 1400 մ: 1 կմ վրա ջուրը 50% կորուստ է ունենում»,- բացատրում է Ս. Սեդրակյանը: Այդ է պատճառը, որ ջրագծերը նորոգում են հատված առ հատված, քանի որ որոշ մասերում ջուրն ուղղակի չի հասնում, իսկ մեկ այլ հատվածում այն ներծծվում է տների մեջ: Համայնքապետը գտել է հարցի լուծման ամենաարդյունավետ տարբերակը՝ կազմակերպությունների հետ ծրագրեր իրականացնելով՝ լուծում տալ գյուղի համար առաջնային խնդիրներին: «Միայն IFAD-ի հետ իրականացվելիք ծրագիրը 140 հազար դոլար է կազմելու, որը համայնքի 16 տարվա բյուջեի գումարն է, ինչը նշանակում է, որ մենք մեր միջոցներով երբեք նման աշխատանք չենք կարող իրականացնել»,- իր առածի կարեւորությունն ու նշանակությունը գիտակցողի արժանապատվությամբ մեկնաբանում է պրն Սեդրակյանը:

Նա տեղեկացրեց նաեւ, որ 1999 թ., իրենց համար բավականին դժվարին մի ժամանակահատվածում, համագործակցել են սոցներդրումների հիմնադրամի հետ 30% համայնքի ներդրմամբ եւ ամբողջովին վերանորոգել ու կահավորել դպրոցը: ՕՔՍՖԱՄ-ի միջոցներով նաեւ բուժկետ են կառուցել, սարքավորումներով ապահովել, ստեղծել դեղորայքի շրջանառու ֆոնդ: Համայնքապետը նշեց, որ երիտասարդության համար եւս զբաղվածության ու գյուղին կապելու ուղիներ են փնտրում եւ, կարծես թե, գտել են: ՏԱՍԻՍԻ-ի միջոցներով տեղեկատվական կենտրոն են ստեղծել նրանց համար՝ համալրված ժամանակակից տեխնիկայով: Գործում է նաեւ մշակույթի տունը, բավականին հարուստ գրադարան ունեն՝ 11 հազար կտոր գրականությամբ, որը համայնքապետի հավաստմամբ հնարավոր կպերով համալրում են մարզային կենտրոնից կամ Մոսկվայից:

Համայնքապետարանի մտահոգությունն է, որ երիտասարդները ինֆորմացիայի աղբյուրներից զրկված են, թերթ առանձնապես չի մտնում գյուղ: Հեռուստատեսությունից էլ են զրկված, որովհետեւ թափառող ալիքների հույսին են, որը մերթ կա, մերթ՝ ոչ: Միայն «Հ1» ծրագիրն են որոշ չափով դիտում: «Դրանից էլ հոգնել են, օրը 4-5 ժամ սերիալ են դնում, երիտասարդությունը ի՞նչ սովորի: Չկա էն աղբյուրը, որից հնարավոր լինի լուրջ բաների հետ առնչվել»,- երիտասարդության դժգոհությունն է փոխանցում պրն Սեդրակյանը:

Չնայած ստեղծված հնարավոր պայմաններին՝ գյուղից, այնուամենայնիվ, երիտասարդության մեծ արտահոսք կա, քանի որ աշխատանք չկա: Համայնքապետը դա կապում էր նաեւ գյուղի հողային ոչ մեծ ռեսուրսների հետ. տնամերձ հողամասերը փոքր են, ընդամենը՝ 1400 մ, ընտանիքներ կան, որոնց սեփականաշնորհումը 1 հա էլ չի կազմում, իսկ դրանից մեծ եկամուտ հնարավոր չէ ակնկալել: Ոմանք տեղափոխվում են Երեւան՝ շինարարությունում աշխատելու, ոմանք էլ՝ Արցախ կամ Ռուսաստան: Արտաբույնքում 80 նպաստառու ընտանիք կա: Նրանց մի մասը երիտասարդ ընտանիքներ են, որոնք, չունենալով բավարար չափով հող, խիստ ընչազուրկ են աղքատ: Մյուս մասն էլ՝ 25-30 ընտանիք, միայնակ թոշակառուներ են, որոնց երեխաները գնացել են Ռուսաստան ու մոռացել ծնողներին:

Այս տարին անբարենպաստ էր եղել նաեւ Արտաբույնքի համար՝ գրասահարություն, կարկուտ, երաշտ, պակասն էլ ուժգին քամիներն էին լրացրել: Կորուստները գնահատել են, բայց առայսօր փոխհատուցում չի տրվել: Պտղաբուծությամբ ու անասնապահությամբ զբաղող գյուղն այս ձմեռը դիմավորելու է գրեթե դատարկաձեռն, գյուղացիները անասնակերի փնտրտուքների մեջ են: Այդքան կորուստներից հետո կիաջողվի՞ գոնե անասուններին պահպանել, թե հարկադրված կլինեն աշնան վերջին դրանց մի մասից հրաժարվել, որն էլ ավելի կխորացնի նրանց սոցիալտնտեսական ծանր վիճակը:

Պետք է խոստովանել, որ Արտաբույնքը մեր այցելած բազմաթիվ գյուղերից միակն էր, որտեղ վերջին տարիներին այսքան կարեւոր ծրագրեր էին իրականացվել եւ համայնքապետարանն էլ խնդիրներ չուներ պետության հետ:

ՄԵՏԱՔՍԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳՈՐԻՍ

Հիմա ո՞վ պետք է մաքուր պահի մեր քաղաքը

Բ էջից

որոնք, գումարվելով բնապահպանական անբարենպաստ պայմաններին, նպաստում են օրգանիզմի պարբերական հյուծվածությանը:

Այս ամենին ավելանում է նաեւ այն հանգամանքը, որ, որպես լեռնային գոտի, Գորիսը էնդեմիկ օջախ է: Այստեղ, առանց տարանջատման այրման միջոցով աղբը ոչնչացնելիս, արտաքին միջավայր են նետվում բազմաթիվ վնասակար միացություններ, կայուն օրգանական աղտոտիչներ, որոնք օդից, ջրից անցնում են մարդուն, ազդում նրա էնդոկրին, իմուն համակարգին, առաջացնում չարորակ ուռուցքներ: Դրա վկայությունն է, որ քաղաքում տարեցտարի ավելանում են էնդոկրին խոշորի տարբեր աստիճանի ախտահարման դեպքերը. մասնագետների կարծիքով խոշորի ախտանիշ գրանցվել է դեռահասների 75 %-ի մոտ: Բացի այդ, քաղաքի բաց աղբավայրից ոչ հեռու բնակվող կանանց մոտ աճում է չբերությունը, տարբեր արատներով երեխաների ծնելիությունը,

Քաղաքի սանիտարական ծայրահեղ անմխիթար վիճակում գտնվող աղբավայրը պատճառ է դառնում նաեւ զոհնոզ ծագման հետ կապված տարբեր հիվանդությունների, մասնավորապես՝ որդակրության, էխինոկոկի տարածմանը: Անասնաբուժական պետական տեսչության Սյունիքի մարզային բաժնի պետ Էդգար Թոխսանցի ասելով՝ իրենք կարողացել են հասնել այն բանին, որ քաղաքի տարածքում արգելվի անասունների մորթը, սակայն անգամ քաղաքից դուրս սպանդի ենթարկված անասունների փորոտիքը, այնուամենայնիվ, վտանգի մեծ օջախ է ներկայացնում, հատկապես, երբ այն նետվում է կամ Վարարակը, կամ թեկուզ քաղաքի, այսպես կոչված, գլխավոր աղբավայրը:

Գորիս քաղաքի բնապահպանական վիճակի վրա բացասական ազդեցություն է ունենում նաեւ քաղաքի խմելու ջրի ներքին ցանցի վթարային վիճակը: Մեկ վայրկյանում 120-130 լ ջուր սպացող քաղաքում ներքին ցանցն այնքան է վնասված, որ ջրի կորուստը հասնում է մինչեւ 75 %: Անմխիթար վիճակում են գտնվում ջրամատակարարումը կարգավորող կափարիչներ չունեցող դիտահորերը, որոնք հաճախ լցվում են ինչպես շրջակա առուների ջրերով, այնպես էլ՝ անձրեւով, եւ խախուտ ցանցի պատճառով խառնվում խմելու ջրի ընդհանուր ցանցին: Քաղաքի ջրամատակարարման խնդրի լուծման գործում կարեւոր է ներքին ցանցի գոտիավորումը: Մինչեւ վերջին տարիները քաղաքի ջրամատակարարումն իրականացվում էր ճարտարագիտական համալսարանի մասնագետների կողմից առաջարկված ջրամատակարարման 9 գոտիների միջոցով, որը հնարավորություն էր ընձեռում ջրամբարների միջոցով այնպես կարգավորել թասի նման վող քաղաքի ջրամատակարարումը, որ անգամ վերին հորիզոնական գոտում գտնվող բնակիչներն ապահովվում էին ջրով:

Քաղաքի բնապահպանական խնդիրների ամբողջական պատկերը ներկայացնելու համար պետք է նշել նաեւ, որ Գորիսում, առանձին հուղարկավորման ծառայություն չլինելու պատճառով, թե՛ քաղաքի եւ թե՛ վարչական շրջանի բոլոր գյուղերից դիահերձում եւ դիակների պահպանում կատարվում է կենտրոնական հիվանդանոցում (այն հատվածում, որի վերին հարկում ծննդատունն է): Մինչդեռ, հատկապես Արցախյան պատերազմի տարիներին, եւ այժմ էլ անչափ կարեւորվում է հատուկ մշակված սառնարանային պայմաններ ունենալու խնդիրը: Կարեւոր է եւ այն հանգամանքը, որ թեպես հերձվածքը չի խառնվում քաղաքի ընդհանուր աղբին, այնուամենայնիվ, թաղվում է հիվանդանոցի տարածքում՝ վարչական շենքից ընդամենը 300 մ հեռավորության վրա:

Գորիսի էկոլոգիական ֆոնի պահպանման խնդրում կարեւոր է նաեւ, որ քաղաքի երկու գերեզմանատները գրեթե մխրճված են բնակելի տների մեջ եւ հաշվի առնելով ջրամատակարարման ու ջրահեռացման խախուտ ցանցը, առա պիտի վստահ լինել, որ դրանք այսօր էլ շարունակվելով համալրվել՝ շրջակա բնակելի տների համար լուրջ վտանգ են ներկայացնում: Եվ, եթե գերեզմանների խնդիրը ինչ որ առումով հոգեբանական, սոցիալական բնույթ ունի, ապա քաղաքի կենտրոնով անցնող միջպետական ճանապարհի տեղափոխումը, որը շարունակ ծանրաբեռնված է բեռնատար ավտոմեքենաներով եւ դրանցից արտանետված գազերը, ծանր մետաղները լուրջ վտանգ են ներկայացնում քաղաքի բնակիչների համար, արդեն իսկ պետական պատասխանատուներ պարտականությունն է, մանավանդ, որ ծանրաբեռնվածության պատճառով նույն այդ՝ Սյունիքի փողոցի մի շարք բնակելի տների պատերին ճեղքեր են նկատվում: Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյանի տեղեկությամբ համայնքային իշխանությունը մի քանի անգամ դիմել է ՀՀ կառավարությանը, Հանրապետության նախագահին՝ փողոցը բեռնաթափելու համար Լինսի հիմնադրամով այլընտրանքային, քաղաքը շրջանցող միջպետական ճանապարհի կառուցման համար, որը նախնական հաշվարկներով կարող է կազմել 2,5-3 միլիոն ԱՄՆ դոլար, սակայն դեռեւս որոշակի արդյունքներ չկան:

Տասնամյակներ առաջ Գորիսում իշխանությունների կողմից մի շարժում էր ծավալվել՝ «Գորիսը մեր տունն է, մենք ենք նրա տերը»: Տարբեր մեկնաբանություններով հանդերձ, այնուամենայնիվ, այդ շարժումը զգալի դրական արդյունք ունեցավ այն առումով, որ քաղաքի բնակիչները ձգտում էին հաղթող ճանաչվել իրենց շրջակա միջավայրի մաքրության համար ծավալված մրցույթում: Տարեցտարի, սակայն, նվազեց ոչ միայն բնակիչների՝ մաքուր քաղաք ունենալու խանդավառությունը, այլեւ տեղական իշխանությունների պատասխանատվությունը՝ օրենքով իրենց վերապահված պարտականություններն իրականացնելու առումով:

«Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով համայնքի ղեկավարի վրա է դրված բնության եւ շրջակա միջավայրի բնագավառում վերահսկողություն իրականացնելու գործառույթն ու այն անմիջական գործողությունների կատարումը, որոնք պետք է ապահովեն այդ անվտանգությունը: Բացի այդ, շրջակա միջավայրի պահպանությունը «Հազարամյակի զարգացման մարտահրավերներ» ծրագրի նպատակներից մեկն է եւ այդ խնդրի լուծման համար պիտի որ մշակվի եւ հետեւողականորեն իրականացվի Գորիս քաղաքի մարդկանց կյանքի անվտանգությունն ապահովող համալիր միջոցառումների ծրագիր, որում ընդգրկվեն «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության եւ դաստիարակության մասին» ՀՀ օրենքի կիրառումից մինչեւ «Բնապահպանության վերահսկողության մասին» օրենքի ապահովում:

Հակառակ պարագայում այդպես էլ օդում կախված կմնա Գորիսի մասին գրված հանրահայտ «Մայան եղելության» վեպի հերոսի՝ փողոցները «պլպլացնող» Ճել Ավան բիձայի հարցը. «Հիմա ո՞վ պիտի մաքուր պահի մեր քաղաքը...»

ՍՈՒՍԱՆՆԱ ՀԱՍՆԱՋԱՐՅԱՆ

Վանգված հեռանկար՝ գորշ ու անհրապույր պատերի ներքո

Գյուղական համայնքներում դպրոցի բացառիկ եւ կարեւոր դերակատարությունն ակնհայտ է: Հատկապես, երբ խոսքը վերաբերում է բարձրլեռնային, սահմանամերձ եւ հեռավոր գյուղական բնակավայրերին: Ինչպե՞ս են նրանք ապրում, ինչպիսի՞ աշխատանքային պայմաններ ունեն, ինչպիսի՞ն է կրթամակարդակը, քանի որ հիմնականում գյուղերում է կենտրոնացած բնակչության աղքատ խավը:

Այս ամենը տեսնելու եւ լսելու համար այցելեցինք Գեղարքունիքի մարզի Վարդենիսի վարչատարածքի մի քանի դպրոցներ:

Ժամը 11:30-ին Գեղամաբակի դպրոցի դուռը կողպված էր: Չհաջողվեց հանդիպել դպրոցի որեւէ աշխատողի՝ դպրոցի փակ լինելու մասին հարցադրում անելու համար: Համայնքի բնակիչները դպրոցում 2 տեղացի աշխատող գիտեին միայն՝ հավաքարարին ու «զանգ տվողին», սակայն նրանք էլ դաշտում էին: Նախկինում այս գյուղում բնակվել են միայն ադրբեջանցիներ: 1988-1992 թթ. բռնագաղթից հետո համայնքում բնակություն են հաստատել 45 փախստական ընտանիքներ, որոնցից ներկա պահին փաստացի բնակվում է 11 ընտանիք, իսկ համայնքի տնտեսությունները շուրջ 25-ն են:

Գյուղի գերխնդիրը տարիներ շարունակ խմելու ջուրն է եղել. խմելու ջրի ներքին ցանցը չի գործում, որի պատճառով մարդիկ լիքում են փոքր ու հեռավոր այս գյուղը: Բնակիչները օգտվում են գյուղում հոսող միակ աղբյուրից: Որոգման ջուրն էլ երկնքից է թափվում, «եթե Աստված կամենում է», ասում են գյուղի բնակիչները: Գեղամաբակը նաեւ բուժկետ չունի: Բնակիչները օգտվում են հարեւան համայնքի՝ Շաջրեքի ամբուլատորիայից: Գյուղը զրկված է հեռախոսակապից, չունի խանութ: Համայնքում նաեւ սեփականաշնորհված հող ունեցող բնակիչներ չկան: Տարիներ առաջ նախկին գյուղապետի խորհրդով մարդիկ հրաժարվել են իրենց հողերից, որպեսզի ընտանեկան նպաստ ստանան: Չնայած դրան, երբ ցանկություն են ունենում վարձակալական հիմունքներով հող մշակել, տեղական իշխանությունները խոչընդոտներ չեն հարուցում:

Գյուղը դասակվում է, եւ դպրոցն այդ երեւույթը կանխող, թերեւս, միակ հաստատությունը կարող է լինել: Գեղամաբակի դպրոցն 8-ամյա է: Այս տարի դպրոցն ունի 11 աշակերտ, 5 ուսուցիչ: Սա՝ դպրոցի աշակերտների հաշվարկով: Այդ 5 ուսուցիչներն էլ Վարդենիս քաղաքից են ժամանում: Ինչպես երեւում է, նրանք բավական բանիմաց են, քանի որ յուրաքանչյուրին բաժին է ընկնում դասավանդելիք առարկաների մի տարողունակ ցանկ: Ջմռան ամիսներին էլ շատ հաճախ ճանապարհները փակվում են, եւ ուսուցիչները չեն կարողանում հասնել դպրոց: Գեղամաբակի բնակիչների հավաստմամբ օրերով դպրոցը փակ է մնում: Այդպիսի օրերին մեծ դժվարությամբ միայն տնօրենն է ոտքով հազվադեպ հասնում դպրոց: Իսկ եթե համայնքից գոնե մի ուսուցիչ ունենային, դպրոցն այդ օրերին չէր փակվի, երեխաների կրթական մակարդակն էլ ցածր չէր լինի:

Երիտասարդներ կան, որ գրաճանաչ չեն, համայնքի բնակիչներից ոչ ոք բարձրագույն կրթություն չունի: Միակ միջին մասնագիտական կրթություն ունեցողը Գալստյան Արփինեն է: Նա ավարտել է Վարդենիսի պետական քոլեջը՝ տարական դասարանների ուսուցիչ որակավորմամբ: Երիտասարդ մասնագետին իր գյուղի դպրոցում հաջողվել է աշխատել 2004 թ.-ին, 3 ամսով, ապա հաստիքների կրճատման պատճառով ազատվել է աշխատանքից: Արփինեն վստահ չէ, թե դպրոցում աշխատող բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն կրթություն, թեպետեւ իր ազատման պատճառը կրթական ատեստացիան չի եղել: Ինչպես հավաստում են համայնքի բնակիչները, իր աշխատած կարճ ժամանակահատվածում, երբ ձյան պատճառով ճանապարհները փակվել են, Արփինեն երբեք չի բաց թողածը:

Բացի շաբաթ եւ կիրակի օրերից, Գեղամաբակից Վարդենիս ամեն օր ավտոբուս է աշխատում: Սակայն ձմռանը, երբ ճանապարհները փակվում են, ավտոբուսն հասնում է մինչեւ 2 կմ հեռավորության վրա գտնվող Շաջրեք գյուղը: Ճանապարհները բացվում են, երբ եղանակը տաքանում է, իսկ խիստ անհրաժեշտության դեպքում բնակիչներն իրենք են բացում ճանապարհը՝ ապավինելով բահերի «աջակցությանը»: Գեղամաբակցի երեխաները, երբ ցանկություն են ունենում սովորելու 9-10-րդ դասարաններում, ուսումը շարունակում են հարեւան Շաջրեք գյուղի դպրոցում:

Գեղամաբակի դպրոցը նախատեսված է 160 աշակերտի համար: Միհարկանի դպրոցը տարիներ շարունակ չի վերանորոգվել: Դոնոր կազմակերպությունները հետաքրքրված չեն ներդրումներ կատարելու այդքան սակավաթիվ աշակերտներ ունեցող դպրոցում: Պետական աջակցությունն էլ ուշանում է, եւ Գեղամաբակ գյուղի աշակերտներն ստիպված են տեսնել անհրապույր պատեր, քանդված հատակ, երկաթյուղով կարկատված պատուհաններ եւ առաստաղ... պարզապես գրատախտակով նորոգված: Ուսի աշխատելու ցանկությունն ու կրթամակարդակն էլ այդ իրողության պարագայում դառնում են ուղիղ համեմատական...

Գեղամաբակի դպրոցի նման անհրապույր վիճակում է գտնվում Ազատ գյուղի ութամյա դպրոցը: 2005 թ. մարտին առաս ձյան պատճառով ճկվեց, ապա քամիների պատճառով քանդվեց դպրոցի տանիքի կեսից ավելին: Ազատի դպրոցն այս ուսումնական տարում ունի 25 աշակերտ: Դասավանդում են 11 ուսուցիչներ: Տանիքի քանդված լինելու պատճառով ներկայումս օգտագործում են դպրոցի մի հատվածը, իսկ առանց տանիքի մնացած հատվածը քանդվում ու քայքայվում է տեղումների պատճառով: Վերջին անգամ՝ 1999 թ.-ին, դպրոցը եւ մասնավորապես տանիքը վերանորոգվել է Կաթոլիկ օգնության ծառայություն (ԿՕԾ) կազմակերպության աջակցությամբ եւ համայնքի բնակիչների ջանքերով: Իսկ այժմ հույս ունեն, որ այս ձմեռ այն կրկին կնորոգվի:

Դպրոցի ուսուցիչները հիմնականում բարձրագույն կրթություն ունեն, նրանց մի մասը տեղացիներ են: Ունեն նաեւ 2 զինծառայող ուսուցիչներ, որոնք ապրում են հենց գյուղում: Դպրոցը օտար լեզվի ուսուցիչ չունի: Միջնակարգ կրթություն ստանալու համար, 8-ամյա դպրոցն ավարտելուց հետո աշակերտները հաճախում են 2 կմ հեռավորության վրա գտնվող Կութ գյուղի դպրոցը:

Ազատի հարեւանությամբ, Սոթք գյուղի դպրոցում արդեն սովորում է 207 աշակերտ: Դասավանդում է 21 ուսուցիչ, սակայն դասավանդողների այս կազմը չի համապատասխանում ներկայումս պահանջվող պրոֆիլային ուսուցման պահանջներին: Սակայն ինչպես գյուղական, այնպես էլ հանրապետության բազում դպրոցների համար դասավանդողների կազմի ընդլայնումը ֆինանսավորման տեսանկյունից ուղղակի անհարկի շեղություն է, իսկ կրթության որակի ապահովման առումով՝ ծարահատված բացթողում:



Գեղամաբակ գյուղի 160 աշակերտներն ստիպված են տեսնել անհրապույր պատեր, քանդված հատակ, երկաթյուղով կարկատված պատուհաններ եւ առաստաղ... գրատախտակով նորոգված:

Գյուղական վայրերի համար արդեն աշակերտական մեծ թվաքանակ ունեցող այս դպրոցը, սակայն, նույնպես գտնվում է խիստ անբարեկարգ վիճակում: Վերջին անգամ Սոթքի դպրոցը վերանորոգվել է 1999 թ.-ին, կրկին ԿՕԾ կազմակերպության աջակցությամբ: Դպրոցական շենքի մասնաշենքերից մեկը վթարային է ու խիստ վտանգավոր է դարձել շրջապատի համար: Տանիքի պանելային ենթակառույցները խախտվել են ու փլվուզել շենքի մեջ: Մասնաշենքի ապամոնտաժման աշխատանքները պարզապես դարձել են հրամայական անհրաժեշտություն, քանի որ փլուզման վտանգը սպառնում է աշակերտներին, որոնք քայլում, վազվզում են բակում, հենց այդ մասնաշենքի հարեւանությամբ: Թեպետեւ այն ցանկապատվել է, եւ աշակերտների հետ մշտապես տարվում են նախազգուշացման աշխատանքներ, իսկ մասնաշենքը հսկվում է, սակայն չմոռանանք, որ դպրոցականները նաեւ արկածներ են սիրում:

Սոթքի դպրոցի օգտագործվող մասը նույնպես հիմնանորոգման կարիք ունի: 2005 թ. մարտի 13-ին տեղի ունեցած երկրաշարժի պատճառով էլ ավերվել է դպրոցի սպորտդահլիճը: Կրթության նկատմամբ վերաբերմունքը ձեւավորվում է հենց դպրոց ոտք դնելու պահից սկսած, մինչդեռ գորշ ու անհրապույր պատերը արժեզրկում են ընդհանուր առմամբ կրթության նկատմամբ վերաբերմունքը:

Համայնքի կաթվածահար ջրամատակարարումը նաեւ դրսեւորվում է դպրոցում: Մաքրելու համար 3 հավաքարարները օրական 200-300 լ ջուր են կրում շուրջ 500 մ հեռավորության վրա գտվող առվից, իսկ խմելու ջուր բերելու համար 150-200 մ ճանապարհ են անցնում: Դպրոցի սանհանգույցները ջրի պատճառով չեն գործում: Առհասարակ, գործող սանհանգույց ունենալը գյուղական դպրոցներում ավելի արտառոց է, քան համակարգչային տեխնիկայի առկայությունը:

Համայնքի բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի պատճառով դպրոցի ամենամեծ հոգսը դասագրքերի վարձավճարները հավաքելու դժվարությունն է: Անցած տարվա պարտքը կազմում է 70 հազար դրամ, իսկ այս տարվա վարձավճարները կազմում են շուրջ 240 հազար դրամ: Այս պարագայում դպրոցի բյուջեն հնարավոր չի դարձնում ինչպես բավարար քանակով դասագրքերի պատվիրումը, այնպես էլ նոր ուսումնական տարվա առթիվ ներքին հարդարման աշխատանքներ իրականացնելը: Իսկ այս եւ անգամ լավագույն դասավանդողներ ունենալու դեպքում դպրոցը չի կարող ապահովել բավարար կրթամակարդակ, որը հետագայում կխթանի սովորողների տնտեսական ակտիվությունը եւ կարգավիճակը խոցելիության բարձր մակարդակ ունեցող հեռավոր այս գյուղերում:

Ավելի հեռավոր եւ մեկուսացած մի գյուղի՝ Գեղարքի համայնքի դպրոցն այս տարի ունի 13 աշակերտ, 5 ուսուցիչ եւ 6 վարչական աշխատող: Բացի հաշվապահից, բոլոր աշխատողները Գեղարքի բնակիչներ են: Միակ բարձրագույն կրթություն ունեցողը դպրոցի տնօրեն Թագուհի Աբայանն է: Դպրոցն ութամյա է, իսկ միջնակարգ կրթություն ստանալու հարցն այստեղ ավելի դժվար է, քանի որ հարեւան համայնքից՝ Խաչաղբյուրից, Գեղարքը հեռու է 6-7 կմ, իսկ ձմռանը միջհամայնքային գրունտային ճանապարհը ամիսներ շարունակ դառնում է պարզապես անանցանելի: Համայնքային բազում խնդիրներին ավելանում է նաեւ կրթություն ստանալու անհավասարությունը, հետեւաբար բնակիչները լքում են գյուղը, որը վերածվում է անասնապահական բնակավայրի՝ աուլի: Այլ կերպ ինչպես կարելի է կոչել մի համայնք, որտեղ ձմռանը բնակվում է 12 տնտեսություն, իսկ համայնքապետարանը ամիսներով փակ է մնում:

Սոթքի դպրոցի օգտագործվող մասը նույնպես հիմնանորոգման կարիք ունի, բայց պետությունն այդ հարցով մտահոգված չէ: Աշակերտներին կիսաջրվի՝ ձեռքերով շաղախ անելով վերանորոգել դպրոցը:

Ի հակադրություն գյուղի տխուր վիճակին՝ Գեղարքի համայնքի դպրոցը, որ Հայ կրթական հիմնարկության աջակցությամբ 2002 թ. վերակառուցվել է խորհրդային տարիներին կառուցված նախկին խանութի շենքում, հնարավորությունների լիարժեք օգտագործման օրինակելի հաստատություն է: Մաքրություն է բոլոր անկյուններում, հոգատար եւ կոկիկ փակցված տարբնույթ գեղանկարչական, ուսումնամեթոդական աշխատանքներ, թարմ ոլակատներ, որ կրթական բարենպաստ մթնոլորտ են ստեղծում դասավանդողների եւ սովորողների համար: Իսկ դասագրքերի վարձավճարների մասին տեղեկացնող փաթեթն էլ փակցված է միջանցքում, որ թափանցիկ աշխատանքի բացառիկ դրսեւորում է մեզանում:

Մեկ խնդիր կա դեռեւս. լուծված չէ Գեղարքի դպրոցական շենքի կարգավիճակի հարցը: Շենքը պատկանում է Վարդենիսի տարածքային սպառողական կոոպերատիվին, իսկ դպրոցական շինության սեփականության եւ հաշվեկշռից հաշվեկշիռ տեղափոխելու խնդիրը դեռեւս սպասում է իր կարգավորմանը:

Սահմանամերձ Կուտական գյուղը ծովի մակարդակից 2120 մ բարձրության վրա է գտնվում: Գյուղն ունի 239 բնակիչ, որից 176-ը փախստականներ են: Գյուղի բնակիչների հիմնական մասը՝ հատկապես փախստականները, գտնվում են սոցիալապես ծանր վիճակում: Գյուղի միջնակարգ դպրոցը, որ միհարկանի շինություն է, կառուցվել է 1958 թ.-ին: Դպրոցի մասնաշենքերից մեկը 1992-94 թթ. ռմբակոծումների հետեւանքով հիմնովին ավերվել է, իսկ օգտագործվող մասնաշենքը խիստ անմխիթար վիճակում է գտնվում: Շենքային պայմաններն անբավարար են ուսումնական գործընթացի իրականացման համար:

Դպրոցի շենքը հին է, տանիքի շիֆերային ծածկը մաշված եւ կոտրված է, որի հետեւանքով ձյունն ու անձրեւը լցվում են տանիքի տակ, ներծծվում պատերով եւ առաջացած խոնավությունից պատերի ծեփը քանդվում-թափվում է: Առաստաղի գերաններն փտած են, հարդը տեղ-տեղ թափված, որտեղից եւ դասասենյակ են լցվում անձրեւաջրերն ու ձյունը: Դասասենյակների եւ միջանցքի ծեփը թափված է, հատակի տախտակները փտած են, կոտրված, հետեւապես սառը օդը ձմռանը նաեւ հատակից է ներթափանցում: Դռները կիսաջարդ են, լուսամուտները՝ միափեղկ, ապակիների մի մասը՝ կոտրված: Ջրհեղեղի եւ սելավների ժամանակ ձյունը եւ ցեխաջրերը լցվում են դպրոցի միջանցքը եւ դասասենյակները: Դպրոցի 40 աշակերտների եւ համայնքի միակ լուսավոր անկյունը 2 տարի առաջ Ա. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի միջոցով հիմնված համակարգչային սենյակն է,- միակ անկյունը, որ Կուտականին կապում է ժամանակակից աշխարհի հետ:

Նկարագրված դպրոցներում չկան լաբորատորիաներ, կահավորված դասասենյակներ, դիդակտիկ եւ ուսումնական նյութեր: Ջեռուցում իրականացվում է հին ու ավանդական մեթոդով՝ վառարան, դիզելային վառելանյութ, ծխնելույզ: Այս տխուր իրականությունը վանում է այն եզակի երիտասարդներին, որոնք, կրթական համակարգի՝ միջնակարգից բարձր օղակներում ուսանելուց հետո, գյուղ վերադառնալու ընտրության առաջ են կանգնում:

Կրթությունը կարեւորագույն գործոն է աղքատության հաղթահարման եւ տնտեսական ակտիվության խթանման գործում: Սակայն ցանկալի հեռանկարը դեռ չի ուրվագծվում: Գյուղական այս համայնքների բնակիչները ելույթների ու կոչերի կարիք չունեն, այլ մարդավայել ապրելու եւ իրենց սահմանադրական իրավունքներն իրացնելու պարզ ու մարդկային ցանկություն:

ԼՈՒՍԻՆԵ ԹՈՓՉՅԱՆԸ

Նյութը պատրաստվել է Համաշխարհային բանկի եւ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ-Հայաստանի գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:

ԱԶԳ **Միջազգային**

ԱԿՆ ԸՆԴ ԱԿԱՆ

«Ալժիրում Ֆրանսիայի իրագործած ցեղասպանության» վերաբերյալ օրինագիծ Թուրքիայի Ազգային մեծ ժողովում

Ֆրանսիական մամուլը հեգնանքով է վերաբերվում դրան

Հոկտեմբերի 12-ին Ֆրանսիայի Ազգային ժողովում քվեարկության է դրվելու «Հայոց ցեղասպանության ուրացման» համար մինչեւ 5 տարի ազատազրկում եւ 45 հազար եվրո տուգանք նախատեսող օրինագիծը: Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ դա քվեարկությամբ կհաստատվի, ընդ որում առանց մեծ դժվարության: Համենայն դեպս, քվեարկությունը կասեցնելու պաշտոնական Անկարայի բոլոր ձեռնարկումներն ապարդյուն են անցել, ինչը նախորդ օրը հաստատել է Թուրքիայի արտգործնախարարությունը՝ հայտնելով թուրքական մամուլին, որ մարել են օրինագծի կասեցման բոլոր հույսերը:

Այս հանգամանքը հավասարակշռությունից հանում է Թուրքիային, նրա հակազդեցությունը նախ հիվանդագին բնույթ է ստանում, ապա վերածվում է հակաֆրանսիական հիստերիայի, որի մեջ պաշտոնական Անկարայի հետ հայտնվում են թուրքական կառավարությունը, Թուրքիայի Ազգային մեծ ժողովը՝ Մեջլիսը, իշխող թե ընդդիմադիր քաղաքական գրեթե բոլոր կուսակցությունները, հասարակական կազմակերպություններն ու բազմաթիվ այլ կառույցներ:

Թուրքիայում ծավալվող հակաֆրանսիական հիստերիայի թերեւ ամենավառ արտահայտությունն «Ալժիրում Ֆրանսիայի իրագործած ցեղասպանության ուրացման» համար պատիժ սահմանող 3 օրինագծերի ընդգրկումն էր Մեջլիսի օրակարգում: Դրանցից առաջինը հեղինակել էր անկախական պատգամավորը, որին հետեւել էր ընդդիմադիր «Մայր հայրենիք» կուսակցության պատգամավորի օրինագիծը: Իսկ երրորդը պատրաստել է երկրում իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության պատգամավոր Մահմուդ Գյոխսուն:

Երեք օրինագծերի համադրմամբ ստեղծվել է մեկ ընդհանուր օրինագիծ, որն էլ քննարկման կդրվի Մեջլիսի իրավական հարցերով հանձնաժողովի հոկտեմբերի 11-ի նիստում, այսինքն՝ ֆրանսիական օրինագծի քվեարկությունից մեկ օր առաջ: Ըստ օրինագծի, մայիսի 8-ը հռչակվում է ալժիրցիների ցեղասպանության օր եւ ընդգծվում. «Թուրքիան բացահայտորեն ընդունում է Ալժիրում Ֆրանսիայի իրագործած ցեղասպանությունը»:

Ինչ վերաբերում է օրինագծի մեկնաբանությանը, ապա այնտեղ, ըստ «CNN-Turk»-ի, նշվում է. «Հայոց ցեղասպանությունը ժխտողներին հրեռեն պատժելու պատրաստակամություն ցուցաբերող Ֆրանսիայի վարչակարգն Ալժիրում իրագործված ցեղասպանությանը մոտենում է հակադարձ տեսանկյունից: Հանում քաղաքական նպատակների իրականությունը խեղաթյուրող ֆրանսիացի քաղաքական գործիչները նախ պետք է հաշիվ տան մարդկության դեմ Անատոլիայում եւ Ալժիրում կատարված հանցագործությունների համար»:

Ակամա հարց է ծագում՝ ինչո՞ւ ալժիրցիների ցեղասպանության օր նշանակել մայիսի 8-ը: Այդ հարցին պատասխանում է «CNN-Turk»-ը, գրելով. «1945 թ. մայիսի 8-ին, երբ հանդիսությամբ նշվում էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը, ալժիրցիներն ազգային դրոշներով դուրս էին եկել փողոց եւ սպանել նրանց, ովքեր համագործակցում էին ֆրանսիացիների հետ: Խժդժություններին վերջ տալու համար ֆրանսիացի զինվորները նավատորմի եւ օդուժի աջակցությամբ կրակ էին բացել ցուցարարների վրա: Սպանվածների թիվն առ այսօր հայտնի չէ: Պարզապես ենթադրվում է, որ կրակոցների հետեւանքով սպանվել է 10-40 հազար ալժիրցի ցուցարար»:

Ինչ արդյունքի կհանգեցնի Մեջլիսի իրավական հարցերով հանձնաժողովում «Ալժիրում Ֆրանսիայի իրագործած ցեղասպանության ուրացումը» հրեռեն պատժող օրինագծի քննարկումը, հայտնի կդառնա այսօր: Բայց որ դա ֆրանսիական օրինագծի առնչությամբ հուսահատության մեկ այլ դրսեւորում է, կասկած չի հարուցում: Ավելին, ֆրանսիական թերթերը թուրքական վերոհիշյալ օրինագծին հեգնանքով են անդրադառնում:

Հոկտեմբերի 10-ին ինտերնետային էջում «CNN-Turk»-ը նշում է, որ Ֆրանսիայում ոչ որ հաշվի չի առնում ինչպես Թուրքիայի սպառնալիքները, այնպես էլ ալժիրցիների ցեղասպանության վերաբերյալ օրինագիծը: «Միլիեթը» հավելում է. «Ֆրանսիայի Ազգային ժողովն անտեսում է օրինագծի առնչությամբ Թուրքիայի հետ հարաբերություններում առաջացած ճգնաժամը»: Իսկ «Զամանը» դժգոհում է Ֆրանսիայում բնակվող թուրքերից, թե օրինագիծը նրանց դնում է պոտենցիալ հանցագործի կարգավիճակում, իսկ նրանք օրինագծի նկատմամբ անհասկանալիորեն անտարբերություն են ցուցաբերում:

ՀԱՅՈՐ ՉԱԲԵՐՅԱՆ

Թուրքիայի վարչապետին Նիկոլա Սարկոզիի ներկայացրած պահանջները կազմել է Ֆրանսիայի ԱԺ պատգամավոր Պատրիկ Դեւեջյանը

Նիկոլա Սարկոզի

Նախորդ համարում **«Ազգը»**, հենվելով թուրքական «Միլիեթի» վրա, անդրադարձել էր Ֆրանսիայի ներքին գործերի նախարար Նիկոլա Սարկոզիի հետ Թուրքիայի վարչապետ Ռեջեպ Թայիփ Էրդողանի հեռախոսազրույցին, որի ընթացքում վերջինս «Հայոց ցեղասպանության ուրացումը» հրեռեն հետապնդող օրինագծի առնչությամբ աջակցություն էր խնդրել:

Պարզվում է, Սարկոզին Էրդողանին ասել է, որ պետք է մտածի, այնուհետեւ ինքն է զանգահարել: Նա վերոհիշյալ օրինագծի կասեցման համար Թուրքիայի վարչապետին առաջարկել է հետեւյալ նախապայմանները. «Բացել Թուրքիայի հայկական սահմանը, չեղյալ հայտարարել թուրքական քրեական նոր օրենսգրքի 301-րդ հոդվածը եւ հարցը քննարկելու համար ստեղծել հայ-թուրքական միջտեսակարգային երկխոսություն՝ մասնակցությամբ քաղաքական գործիչների»:

Էրդողանը, ըստ «CNN-Turk»-ի, պատասխանել է. «Մենք (հայ եւ թուրք պատմաբանների) համատեղ հանձնաժողով ստեղծելու առաջարկ ենք արել հայկական կողմին: Բարի կամքի այս դրսեւորումը համապատասխան արձագանքի չարժանացավ: 301-րդ հոդվածը որեւէ առնչություն չունի ֆրանսիական օրինագծի հետ: Այդ օրինագիծը ցույց է տալիս, որ Ֆրանսիան մտքի ազատության առումով Թուրքիային քննադատելու իրավունք չունի: Ինչ վերաբերում է հայ-թուրքական սահմանի բացմանը, ապա դրա համար Հայաստանը նախ պետք է արձագանքի յասանը նախ պետք է արձագանքի մեր ընդառաջ քայլերին»:

Նախարար Սարկոզիի վարչապետ Էրդողանին արած վերոհիշյալ երեք առաջարկների առնչությամբ «CNN-Turk»-ը նշում է. «Ֆրանսիայում քաղաքական դիտորդները չեն կասկածում, որ այս առաջարկների հեղինակը Սարկոզիի քաղաքականությունը Սարկոզիի քաղաքական, հայազգի պատգամավոր Պատրիկ Դեւեջյանն է: Ի դեպ, պրն Դեւեջյանը «Հայոց ցեղասպանության ուրացման» համար պատիժ նախատեսող օրինագծի առնչությամբ, որը հոկտեմբերի 12-ին քվեարկության է դրվելու Ֆրանսիայի Ազգային ժողովում, ներկայացրել է փոփոխության առաջարկ՝ պահանջելով օրինագիծն օրենքի ուժ ստանալու դեպքում դրույթները չտարածել պատմաբանների եւ գիտնականների վրա՝ չխոչընդոտելու համար ցեղասպանության հարցի շուրջը գիտական ազատ բանավեճերը:

Հ. ՉԱԲԵՐՅԱՆ

1915 Թ.

Ասորիների ցեղասպանության ճանաչման նախաձեռնություն Հոլանդիայում

Մինչ Թուրքիան բուռն հակազդեցությամբ արձագանքում է Հայոց ցեղասպանության ուրացման վերաբերյալ ֆրանսիական օրինագծին, հոլանդական հեռուստատեսության «Netwerk» լրատվական ծրագրում, որը հեռարձակվել է երկու առանձին ալիքներով, քննարկվում է ասորիների ցեղասպանության հարցը:

Հոլանդիայի ասորական համայնքի ներկայացուցիչները ծրագրում անդրադառնալով 1915 թ. իրադարձություններին, այդ տարեթիվը բնութագրել են իբրեւ «սեւ բիծ» Օսմանյան կայսրության համար: Միաժամանակ նշվել է, որ 1915 թ. թուրքերը ցեղասպանության են ենթարկել ասորիներին՝ սպանելով առնվազն 250 հազար անմեղ մարդկանց:

Հոկտեմբերի 10-ի համարում տեղեկացնելով այդ մասին, թուրքական «Միլիեթը» հիշեցնում է 2004 թ. Հոլանդիայի խորհրդարանի ընդունած բանաձեւը, որը երկրի իշխանություններից պահանջում է սպիտել Թուրքիային՝ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը: Հատկանշական է, որ քաղաքական բոլոր կուսակցությունների աջակցությունն ստացած բանաձեւին կողմ էին քվեարկել նաեւ Հոլանդիայի խորհրդարանի ծագումով թուրք 5 պատգամավորները:

Ի դեպ, «Եվրոպահայերի արդարության եւ ժողովրդավարության Ֆեդերացիան» Հայոց ցեղասպանության փաստն ընդունելու համար ողջունել է Սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ընտրացուցակից նոյեմբերի 29-ին Հոլանդիայում նշանակված խորհրդարանական ընտրություններին մասնակցող պատգամավորության թեկնածու ծագումով թուրք տկն Նեբահաթ Ալբայրաքին, ընդգծելով, որ նա այդ հարցում լուրջ առաջընթաց է կատարել:

Հ. Չ.

Դանիական նոր տեսաերիզը զայրացրել է մահմեդականներին

Մուհամմեդ մարգարեի ծաղրանկարներից հետո Դանիան վերջին զայրացնում է մահմեդական աշխարհին, այս անգամ՝ հեռուստատեսային մի տեսաերիզով: «Ֆիգարո» թերթը հաղորդում է, որ երկուշաբթի օրը դանիական TV2 հեռուստաալիքով ցուցադրված տեսաերիզում Մուհամմեդ մարգարեն ներկայացված է գարեջուր խմող ուղտի կերպարանքով, իսկ մի հարբած ահաբեկիչ գրոհում է Կոպենհագենը:

Իրանի ԱԳՆ-ում Դանիայի դեսպանին կտրական բողոք են հայտնել այդ «լուրջ վիրավորանքի» կապակցությամբ: Նախագահ Մահմուդ Ահմադինեժադը տվյալ միջադեպի առնչությամբ դատապարտել է Արեւմուտքի «ազատական առաջնորդների թուլության եւ սնորության լայն ծավալները»:

Ի դեպ, տեսաերիզի ցուցադրումն անմիջապես դատապարտել է Դանիայի վարչապետ Անդերս Ֆոգ Ռասմուսենը:

Եգիպտոսում «Մուսուլման եղբայրներ» արմատական խմբավորումը խստիվ դատապարտել է տեսաերիզի ցուցադրումը եւ մահմեդականներին հորդորել է բոյկոտել նման քայլեր թույլ տվող երկրների արտադրանքները: Հորդանանի իշխանությունները մահմեդականներին կոչ են արել հանդես բերել զսպվածություն:

Աշխարհի ամենամեծ մահմեդական երկիր Ինդոնեզիայի կրոնական առաջնորդները հանդես են եկել նախազգուշացմամբ. «Իսլամը մահապատիժ է նախատեսում Մուհամմեդ մարգարեին վիրավորողների համար, եթե նրանք չեն զիջում եւ չեն հրաժարվում նման քայլերի կրկնությունից»:

Խնդրո առարկա տեսաերիզի հեղինակը դանիացի ծայրահեղ աջերից Մարտին Ռոզենգաարդն է, որը Դանիացի ժողովրդի կուսակցության անդամ է: Կուսակցությունը վարչապետ Ռասմուսենի աջ կենտրոնամետ կոալիցիայի դաշնակիցներից է: «Ֆիգարոյի» տվյալներով, Ռոզենգաարդը նաեւ 2005 թ. հոկտեմբերին ստեղծված «Դանիայի պատժապանություն» արվեստագետների խմբի անդամ է: Հենց այդ ժամանակ էր, որ դանիական «Յուլլանդս փոստեն» թերթը հրապարակեց Մուհամմեդ մարգարեի 12 ծաղրանկարներ, հարուցելով մահմեդական աշխարհի զայրույթը:

Դանիայի արտգործնախարարը երկրի քաղաքացիներին հորդորել է արտերկրում զգուշանալ մահմեդականների «բացասական հակազդեցությունից»:

Բաշար Ասադ. «Սիրիան եւ Իսրայելը կարող են հաշտ ու խաղաղ ապրել»

Սիրիայի նախագահ Բաշար Ասադը բրիտանական BBC հեռուստառադիոկորպորացիային երեկ տված հարցազրույցում ասել է, որ իր երկիրը եւ Իսրայելը կարող են հաշտ ու ներդաշնակ ապրել, «ճանաչելով միմյանց գոյության իրավունքը»:

Միաժամանակ նա արտահայտվել է գործին միջնորդ դասավորի մասնակցության օգտին, նշելով, որ ԱՄՆ-ը առանձին չի կարող նման դեր կատարել: «Դա ԱՄՆ-ի, ՄԱԿ-ի եւ եվրոպացիների դերն է: Բայց ԱՄՆ-ը չի ուզում խաղալ այդ դերը. նա չունի հաշտության ընկալում», ընդգծել է Ասադը:

Ինտերֆաքս գործակալությունը նշում է, որ Ասադի տվյալ հայտարարությունը փոքր-ինչ տարբերվում է վերջերս քվեության «Ալ Անբա» թերթին նրա տված հարցազրույցից: Այնտեղ նա ասել էր, թե «Իսրայելից ամեն պահի կարելի է նախահարձակում սպասել»:

Արտերկրի զանազան շարժումներին աջակցելու հարցին ի պատասխան Ասադն ասել է, որ Սիրիան իրաքի ապստամբներին եւ լիբանանյան «Հզբոլլահ» արմատական շարժմանն աջակցում է քաղաքականապես, այլ ոչ թե ֆինանսական կամ ռազմական ձեւով: Նախագահը նաեւ հերքել է այն պնդումները, թե Սիրիայի հատուկ ծառայությունները մեղսակից են Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանությանը: Նրա խոսքերով, այդ սպանությունը «Սիրիայի վրա նույնքան բացասաբար ազդեց, որքան Լիբանանի վրա»: Ասադը հավաստիացրել է, որ եթե պարզվեր սիրիացիներից որեւէ մեկի մեղսակցությունը, ապա նա Սիրիայի օրենսդրությամբ «կդատվեր որպես դավաճան»:

Զրհեղեղ եւ արտակարգ դրություն Հունաստանում

Հունաստանի կառավարությունը երկրում արտակարգ դրություն է հայտարարել հյուսիսային շրջաններում սկսված հեղեղումների պատճառով: Մի ամբողջ օր տեղացած հորդառատ անձրեւները գերազանցել են տեղումների ամսական նորման: Ասոշիեյթեդ պրես գործակալության տվյալներով, անհետ կորել է մեկ մարդ, ավերվել են բազմաթիվ տներ, շարից դուրս են եկել ճանապարհներ եւ էլեկտրահաղորդման գծեր:

Թեսալոնիկե եւ Կավալա քաղաքները միացնող կամուրջը փլուզվել է, ցեխաջրերը շրջափակել են բազմաթիվ ճանապարհներ: Վարչապետ Կոստաս Կարամանլիսը մեկնել է աղետյալ շրջաններ, հայտարարելով, որ բոլոր տանտերերը փոխհատուցում կստանան վնասված կամ կորսված ունեցվածքի դիմաց:

Կառավարական փորձագետների կարծիքով, հեղեղման պատճառած վնասն արդեն հասնում է միլիոնավոր դոլարների:

Պ. Ք.

ԱԶԳ

Մշակույթ

Ուշագրավ իրողություն ազգային կինեմատոգրաֆում

Ազգային կինեմատոգրաֆում ասիճանաբար արթնացման եւ վերակենդանացման նշաններ են ի հայս գալիս, որոնք դառնում են վկայությունն այն բանի, որ մեզանում արդեն հարկադրված դադարը փոխակերպվում է ուրույն շարժումներ եւ հայտածումներ պարունակող դրսեւորումների, ոճի եւ գեղագիտական սկզբունքների նորացման: Համո Բեկ-Նազարյանի կինոն, որի ավանդույթները շարունակվեցին հատկապես Հենրիկ Մալյանի ստեղծագործության մեջ, այսօր իր տեղը զիջում է բոլորովին նոր՝ խաղաֆային ֆոլկլորի ու խաղաֆային կենցաղի վրա կառուցված նատուրալիստական-իրապաշտական կինոյին, որն ազգային նեոռեալիզմն է՝ ոչ երբեք իտալական նեոռեալիզմի սեւ-սպիտակ անդրադարձումներով, գրաֆիկական արտահայտչամիջոցների ճգձրտությամբ, այլ ժամանակակից կինոլեզվի ու կենսական ճշմարտության ուրույն ներթափանցումներով: Չխաթարելով ազգային կինոմտածողության արտահայտչական որոշ սկզբունքների համադաշնությունը, որն ստեղծվել է տասնամյակների ընթացքում, այնուամենայնիվ նոր ստեղծվող կինոն ներառում է նաեւ ամերիկյան-հոլիվուդյան կինոյի մի շարք դրսեւորումներ՝ ռոմանտիկ-էպիկական կինոյից մեզ տանելով դեպի խլրտուն-շարժուն ռիթմերը, դեպի կյանքի ճշմարտությունը, որ պլեբեյականն ու էլիտարը վարպետորեն միահյուսված են:

Այս նոր կինոյի տարածք է մտել նաեւ երիտասարդ կինոբեմադրիչ Գոռ Կիրակոսյանը, որի «Մեծ պատմություն փոքր խաղաֆում» ֆիլմը կրում է գեղագիտական այն բոլոր փոփոխություններն ու հստակ նորահաստատումները, որոնք պիտի դիմորոշ դառնան մեր նոր կինեմատոգրաֆի համար, որը գնում է դեպի կենցաղի զարմանալի-ինքնահատուկ բանաստեղծականացման միտումները՝ ամենատվորականի մեջ փնտրելով ու հաստատելով գեղագիտականի նոր դրսեւորումները: Պարզ ու առտնին, գեղարվեստական մեծ ընդհանրացումներից հեռու, գաղափարական հարցադրումներն ասես ժխտող այս ֆիլմի նպատակը մարդկային պարզ ու հասարակ հարաբերությունների բացահայտումն է, ամենատվորականի մեջ զարմանալի-ներքին էպոսայնության ընդգծումն է, ոչ թե ընդհանրացման, այլ մասնավորի մեջ ինքնատիպ գրավչությունների որոնումն է: Սա այն կինոն է, որը դառնում է համահունչ մեր գրականության մեջ եւ թատրոնում սկիզբ առած ուրույն հաստատումների, երբ ոչ թե բացառիկ դեպքերն ու իրադարձություններն են դառնում գեղարվեստական պատումի առանցքը, այլ հասարակ, երբեմն առօրեականության մեջ պահ մտած հարաբերությունները, որոնց ներքին ծալքերում ինքնահատուկ պարադոքսներ կան: Գոռ Կիրակոսյանի նպատակն ու խնդիրն է եղել այդ պարադոքսների բացահայտումը, մարդկային բնավորությունների մեջ անտվորի ու արտառոցի ընդգծումը: Իսկ այս ֆիլմում հանդես եկող բոլոր կերպարները հենց պարադոքսների արտացոլումն են՝ պարուրված տրագիկոմիկական գույներով, հաճախ անտվոր-անըմբռնելի թվացող դրսեւորումներով: Հենց սա նկատի ունենալով է, որ խոսում ենք մասնավորի, տվորականի մեջ արտառոցն ու տպավորիչը տեսնելու ռեժիսորական միտումների մասին:

Այս ֆիլմի հերոսը Երեւանն է, մեր խաղաֆը, որի «բնավորությունը» ֆիլմի առանցքն է: Ուրախալի է, որ ազգային կինեմատոգրաֆում վերջին շրջանում հայացք է հառվում Երեւանին՝ այսպես հաղթահարելով այն կարծրատիպերը, որոնք արմատավորվել էին մեզանում՝ կարծես ստեղծելով «կինեմատոգրաֆիական» եւ «ոչ կինեմատոգրաֆիական» խաղաֆների մասին պատկերացումները: Երեւանի կերպարը հատկապես հիմա դարձել է շատ կինեմատոգրաֆիստների հետաքրքրության նյութը, այն Միխայել Պողոսյանի «Երեւան ջան» ֆիլմի իրոնիկ-գրոտեսկացված պատմություն էր մեր խաղաֆի մասին, իսկ ահա Գոռ Կիրակոսյանի համար Երեւանի կերպարը մատուցվում է նրա մարդկանց ու բնավորությունների միջոցով՝ դարձյալ իրոնիկ-գրոտեսկայինը, որի խորքում տրագիկոմիկականությունը հասնում է իր յուրատեսակ բարձրակետին, հռչակելով գլխավոր արտահայտչաձեւ:

Մի թաղման պատմությունն է դարձել ֆիլմի դիպաշարային հիմքը, արարողություն, որը շատ հաճախ իսկապես վերածվում է պարադոքսների եւ կոմիկական դրությունների պոռթկման: Ամենաողբերգականի մեջ ցայտուն կատակերգականը փնտրելու ռեժիսորական միտումը Գոռ Կիրակոսյանին տարել է դեպի անեկդոտային առանցքը, դեպի հոգացման գոգոլյան ելակետը, սակայն երիտասարդ բեմադրիչը ոչ թե սուր ծաղրի ու սարկազմի, այլ բարեհոգի ծիծաղի, ժպիտի միջոցով է պատկերել իրադարձություններն ու մարդկանց՝ ծիծաղելով նրանց վարքագծերի ու բնավորությունների վրա՝ մերթ ծաղրելով, մերթ թեթեւ ժպտալով...

Իր ֆիլմը Գոռ Կիրակոսյանն սկսում է մի պատմությամբ, որն արտաքուստ բնավ չի մերձենում կատակերգությանը, չի պարունակում կատակերգական հնչեղանգներ, քանի որ առնչվում է ողբերգական իրադարձության. մարդ է մահացել՝ անհեթեթ մահով, զոհ դառնալով իր գլխին ընկած դաշնամուրի: Սա այն ինտրիգն է, որն ասիճանաբար ձեռք է բերում հուժկու կատակերգական ընթացք ու բովանդակություն: Ինտրիգի ծավալի մեջ բեմադրիչը ներմուծել է «թյուրիմացությունների կատակերգության» տարրերը, ապա դրանցից վարպետորեն անցում կատարել դեպի վարքագծերի կոմիզմը՝ պատումի առանցքը դարձնելով թաղումը, որի շուրջը ծավալվող գործողությունները լարում են կատակերգության զսպանակը, միահյուսում վարքագծերի կոմիզմը դրությունների կոմիզմին: Ողջ ֆիլմը բեմադրիչը կառուցել է երգիծական նովելների սկզբունքով՝ գտնելով ներքին կապակցվածություն եւ շարունակականություն՝ այսպես ստեղծելով ֆիլմի ուշագրավ-ավարտուն կոմպոզիցիան: Կոմպոզիցիոն ամբողջականության առումով այս ֆիլմն իսկապես բարձր պրոֆեսիոնալիզմի, կինեմատոգրաֆիական ուշագրավ որակների դրսեւորումն է, ուր երիտասարդ բեմադրիչը կարողացել է ստեղծել ոչ միայն դինամիկ դիպաշար, այլեւ կադրերի անչափ շարժուն ու ռիթմային ուրույն նկարագիր ունեցող հաջորդայնություն, տարբեր պլանների գրագետ, կապակցված համադրություն: Այս ամենի շնորհիվ էլ ստեղծվել է խիստ դիտարժան ֆիլմ, որն առաջին հերթին զարմացնում է կինեմատոգրաֆիական հնարքների ազատ ու անկաշկանդ կիրառմամբ, կինոմոնտաժի վարպետությամբ, տեսարանների ակտիվ ու հագեցած կառուցումներով: Կատակերգությունը չի սիրում ճանձրույթ, չի սիրում դատողականություն, ուստի Գոռ Կիրակոսյանն իր ուշադրությունը սեւեռել է դրությունների պատկերմանը՝ ամեն մի տեսարանի համար գտնելով ինքնատիպ կատակերգական բարձրակետ, որն էլ դառնում է յուրատեսակ նովելի շրջագիծը, որն արդեն իր շարունակությունն է գտնում հաջորդ նովելի մեջ: Պատումը նովելների տրոհման միտումը մերն է, սակայն այն գալիս է ֆիլմից, որովհետեւ բեմադրիչն այնպես է կառուցել ֆիլմը, որ նրա մեջ կան ամբողջական եւ ինքնուրույն պատումներ, որոնք լրացնում են գլխավոր դիպաշարային գիծը:

Գոռ Կիրակոսյանի «Մեծ պատմություն փոքր խաղաֆում» ֆիլմը բերում է կատակերգության նոր արտահայտություն, որում ոչ թե խիստ ընդգծված ու ցայտուն դրություններն են ծնում ծիծաղ, այլ մարդկային բնավորություններն ու դիրքավորումները: Հետեւաբար բեմադրիչը կարողացել է իր նպատակների իրագործմանը հասնել հրաշալի միավորված դերասանակազմի միջոցով, որի առանցքում Հրանտ Թոխատյանն է, ով այս ֆիլմում կատակերգություն է խաղում՝ առանց վառ արտահայտված կոմիկականության՝ այսպես մոտենալով կատակերգության ֆերնանդելյան սկզբունքին: Հրանտ Թոխատյանի դերակատարումը ֆիլմի գլխավոր դերասանական ձեռքբերումն է, որը սակայն չի սվերում մյուս դերակատարներին, մասնավորաբար երիտասարդ դերասաններին, ովքեր այս ֆիլմում զարմանալի օրգանականությամբ եւ ճգձրտությամբ պատկերում են մեր օրերի մարդկանց, նրանց ինքնատիպ փիլիսոփայությունը:

Այս ֆիլմը, անկախ դիպաշարի պարզությանը, նրանում բացառիկ երանգների բացակայությանը, ուշագրավ կինեմատոգրաֆիական աշխատանք է, որը խոսում է երիտասարդ բեմադրիչի հասուն մտածողության եւ ակնհայտ վարպետության մասին:

ԼԵՎՈՆ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Մերշեցում լեզվին՝ երգի եւ աստվածի միջոցով

«Այբուբենի ձայնը. մերձեցում լեզվին՝ երգի եւ աստվածի միջոցով». այս վերնագիրն էր կրում հոկտեմբերի 8-ին ժամը 18.00-ին Քյոլնի սբ. Սահակ-Մեսրոպ եկեղեցում հրավիրված միջոցառումը, որ նվիրված էր Սուրբ թարգմանչաց տոնին:Գերմանահայոց առաջնորդարանի մշակութային հանձնախումբն արդեն ավանդույթ է դարձրել հայոց այբուբենին նվիրված միջոցառմամբ մեկնարկել տարիներ առաջ իր իսկ նախաձեռնած ամենամյա մշակութային շաբաթը: Հայկական ոճանոցների եւ ժողովրդական երգերի մեկնաբանմամբ ելույթ է ունեցել Բոննի թատրոնի սոպրանո Վարդենի Դավթյանը, միջոցառմանը մասնակցել են նաեւ դաշնակահար Արմինե Գուլոյանը, թավջութակահար Պետրոս Սարգսյանը՝ հնչեցնելով Կոմիտասի, Ե. Աբրահամյանի, Ռ. Մելիքյանի ստեղծագործությունները: Սարմեն Աղախանյանը արտասանել է Հովհաննես Շիրազի, Պարույր Սեւակի՝ մայրենի լեզվին նվիրված բանաստեղծություններ:

Ա. Հ.
Գերմանիա

Հայ-ֆրանսիական կապերն ամրապնդվում են

Երեկ ՀՀ մշակույթի եւ երիտասարդական հարցերի նախարար Հասմիկ Պողոսյանի հյուրերն էին Ֆրանսիայի Պրովանս-Ալպ-Կոտ դ'Ազյուր շրջանի ղեկավարության պատվիրակությունը, փոխնախարար Պատրիկ Ալեմանի գլխավորությամբ: Հանդիպումից հետո խնդրեցի նախարարին տեղեկացնել, թե հիմնականում ինչ թեմաների շուրջ էին ընթանում քննարկումները: «Արդեն չորս տարի է, որ մեր համագործակցությունը շարունակվում է եւ այն շատ հստակ է, քանի որ կոնկրետ բնագավառները նախանշված են: Դրանք են՝ կինոն, ժողովրդագրերի հետ կապված միջոցառումներ՝ սկսած թարգմանությունների փոխանակումներից մինչեւ ցուցահանդեսներ եւ այլն: Այսօր մենք արձանագրում ենք այն հանգամանքը, որ այդ ծրագիրը նախանշված էր, բայց շատ ակտիվ չէր իրականացվում, այս փուլում մենք արձանագրում ենք կոնկրետ քայլեր: Մեր երիտասարդ կինոռեժիսորները կմասնակցեն Կաննին զուգահեռ ընթացող երիտասարդ կինեմատոգրաֆիստների փառատոնին, Մարսելում կազմակերպվող գրողների հավաքին, որի արդյունքում կստեղծվի հայ եւ ֆրանսիացի գրողների գործերից կազմված մի ժողովածու, Մարսելի լուսանկարչական ցուցահանդեսին մասնակցություն եւ այլ համատեղ ծրագրեր»: Տիկին Պողոսյանը ամփոփելով նշեց, որ Ֆրանսիայում Հայաստանի տարին եղած կապերը ավելի ամրացրեց ու գործընթացը ավելի աշխուժացավ ու իր կարեւոր դերն ունեցավ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԱՐՅԱՆ

Գնահատանք գրադարանային գործին

Երեկ ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Հասմիկ Պողոսյանի հրամանագրով ՀՀում գրադարանային գործի զարգացման, գրավոր մշակույթի պահպանման եւ տարածման բնագավառներում ունեցած ծառայությունների համար նախարարության ոսկե մեդալով պարգեւատրվեցին Խնկո-Ամոր անվ. ազգային մանկական գրադարանի գլխավոր գրադարանավար Մարի Կոչկակարյանը, Արագածոտնի մարզային գրադարանի տնօրեն Գասպար Գրիգորյանը, Սյունիքի մարզային գրադարանի տնօրեն Սուսաննա Մինասյանը, ԱԺ-ի տեղեկատվական վարչության գրադարանային բաժնի վարիչ Ֆաթմա Խաչատրյանը: Նախարարության պատվոգրեր ու շնորհակալագրեր հանձնվեց հանրապետության բոլոր գրադարանների լավագույն 25 աշխատակիցներին: Տիկին Պողոսյանը մեկ անգամ եւս շնորհավորելով գրադարանների աշխատակիցներին մասնագիտական տոնի առիթով, բարձր գնահատեց նրանց աշխատանքը եւ խոստացավ կամաց-կամաց լուծել այդ բնագավառում ծառացած խնդիրները:

Միջոցառմանը մասնակցում էին նաեւ «Գրադարանների միջազգային ասոցիացիայի» պրեզիդենտ Մասսիմո Ջենտիի Տեբեսկը Իտալիայից եւ քարտուղար տկն. Ռութ Հելլեն՝ Մեծ Բրիտանիայից: 2000 թ. Հայաստանը անդամակցելով ասոցիացիային, փորձում է համատեղ ծրագրեր իրականացնել: Պրն Մասսիմոն շնորհավորելով հայ գրադարանավարներին նշեց, որ Իտալիայում չկա նման տոն եւ կարծիք հայտնեց, որ Հայաստանից շատ բան ունեն սովորելու:

Միջոցառման ընթացքում բազմաթիվ շնորհակալական խոսքեր ասացին գրադարանավարները: Իսկ Շիրակի մարզի գրադարանի տնօրեն Գեւորգ Ամիրյանը հանրապետության երաժշտական միակ գրադարանին նվիրեց Ռոբերտ Հիկկոմի երաժշտական հանրագիտարանը (երկու գրքով): Գրադարանավար Գոհար Թովմասյանը (Արմավիրի մարզ) նախարարին առաջարկեց իրենց աշխատանքը նույնպես համարել մանկավարժական, քանի որ հիմնականում աշխատում են դպրոցականների հետ ու նրանց դաստիարակության հարցում իրենց բաժին լուման ունեն: Հանդիպումն ավարտվեց մտքերի փոխանակմամբ եւ առաջիկա ծրագրերի ներկայացմամբ:

Մ. Մ.

«Դեմ դիմաց»

ԵՐԵՎԱՆ, 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նորարար փորձառական արվեստի կենտրոնում երեկ բացվեց Ֆրանսիայում բնակվող կամ աշխատող 14 հանրահռչակ լուսանկարիչների աշխատանքների ցուցահանդեսը: Ցուցադրությանը ներկայացված էին ֆրանսիացի եւ եվրոպացի հեղինակների շուրջ 50 աշխատանքներ:

Ցուցահանդեսի համադրող Իզաբել դը Մոնֆյուռայի խոսքով, դիմանկարի կամ ինքնադիմանկարի միջոցով լուսանկարիչները փորձել են առավելապես ներկայացնել դասական արվեստի նկատմամբ ֆրանսիական ժամանակակից լուսանկարչության նոր միտումները:

Ցուցահանդեսը կրում է «Դեմ դիմաց» խորագիրը եւ նպատակ ունի ներկայացնելու հատկապես ինքնադիմանկարի թեմայի շուրջ կենտրոնացած արվեստագետներին: Հանրահայտ լուսանկարիչների թվում ներկայացված են Օրլանի, Ռոման Օպալկայի, Ալեն Բյուբլեխի, Նան Գոլդենի, Ֆրանսուա Ռոուայի, նաեւ ճապոնացի Կիմիկո Ոոշիդայի եւ այլոց գործերից:

Հայաստանում ֆրանսիական դեսպանատան նախաձեռնությամբ կազմակերպված այս ցուցահանդեսն անցկացվում է Հայաստանում Ֆրանսիայի օրերի շրջանակում եւ կտեւի մինչեւ նոյեմբերի 18-ը: Ներկայացված լուսանկարները տարվա սկզբին ցուցադրվել են Փարիզում, այնուհետեւ՝ Ստոկհոլմում եւ Էդինբուրգում:

Ցուցահանդեսի բացմանը ներկա էր նաեւ Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Անրի Կյունին: Անդրադառնալով Ռոման Օպալկայի՝ օրերի տարբերությամբ կատարված վեց ինքնադիմանկարներին, դեսպանն այն համեմատեց օր օրի փոփոխվող Հայաստանի հետ՝ նկատելով, որ հայկական աշխարհն, այնուամենայնիվ, հավատարիմ է մնում իր ավանդական դիմանկարին:

ԱԶԳ **Մարզասկան**

Արթուր Աբրահամ. «Ռինգում խելքն է հաղթում»

«Ոչ մի իրադրության մեջ ինքնավերահսկումը չի կորցնում», ասում է ռինգի բժիշկ Վալտեր Վագները:

«Հեշտ չի հանձնվի, նա բացառիկ ուժեղ է», պնդում է մարզիչ Ուլլի Վեգները:

«Հերոս է», «ո՞վ է Արթուր Աբրահամն» իմ հարցին սպառիչ պատասխանում է փողոցում ինձ ընդառաջ եկած առաջին անցորդը:

«Որտեղի՞ց այդքան ուժ», չորեքշաբթի՝ հոկտեմբերի 4-ի երեկոյան հարցնում եմ Բեռլինի օդանավակայանում թռիչքի սպասող Արթուր Աբրահամին: Աշխարհի չեմպիոնի փոխարեն ինձ Ուլլի Վեգներն է պատասխանում. «Բնության պարգև է»:

Երկու շաբաթ է արդեն Գերմանիայում ու նրա սահմաններից դուրս փորձում են հասկանալ՝ ո՞վ է երեւանյան Չարբախից Բեռլինի Շառլոտենբուրգում, Ենգիբարյան բոքսմատչի դպրոցից մեծ ռինգում հայտնված այս 26-ամյա մարզիկը, նա, ով ծնոտի կրկնակի կոտրվածքով, արնաքամ, ռինգից վիրահատարան է գնում՝ հաղթանակած ու բոքսմատչի համաշխարհային պատմության մեջ սեպտեմբերի 23-ին նոր էջ գրում:

Արթուր Աբրահամի հետ հեռախոսային մեր բլից հարցազրույցը՝ ստորեւ:

- Նախ՝ ինչպե՞ս անցավ վիրահատությունը: Հիմա ինչպե՞ս եք: Տիտանե թիթեղներն ու 22 պտուտակագամերը Ձեր բերանում դեռ ինչքա՞ն են մնալու:

- Լավ եմ, հոգեպես ավելի եմ ուժեղացել: Վիրահատությունից մի քանի ժամ հետո ման եմ եկել: 4-5 ամսից թիթեղները կհանեն:

- Գերմանական մամուլն այնպիսի տպավորություն է ստեղծել, թե առողջության մասին չեք մտահոգվում:

- Առաջին տեղում առողջությունս է: Մինչեւ կոտրվածքը չլավանա, ռինգ դուրս չեմ գա: Աշխարհում միայն ես չէ, 35 բռնցքամարտիկ կոտրել է ծնոտը: Բայց ոչ մեկին չի հաջողվել հաղթանակ տանել:

- Այդ օրը Ձեզ ցավի հետ մենակ չէի՞ զգում: Խուճապային տրամադրություն չկա՞ր: Ինչպե՞ս վերահսկեցիք իրադրությունը:

- Խուճապ իհարկե կար՝ արյուն ես կորցնում ու շատ ջուր խմում, 6 լ արյունից եթե 2-ը կորցնում ես, օրգանիզմդ թուլանում է: Իսկ ռինգում միշտ մենակ ես: Բայց դժվար իրավիճակում պիտի ցույց տաս ուժդ, ցույց տաս, որ տղամարդ ես:

- Ձեր երկրպագու հեռուստադիտողներից մեկը կարծիք հայտնեց, թե երկու բոքսմատչիկների համար էլ այդ խաղը մեծ դաս էր՝ Միրանդան հասկացավ, որ անպարտելի չէ, իսկ Աբրահամն էլ տեսավ, որ բոլորն իր նման ինտելիգենտ չեն խաղում: Ո՞րն է այդ խաղից ստացած դասը Ձեզ համար:

- Ամեն մի խաղից մի դաս քաղում ես, փորձդ է ավելանում: Նորից համոզվեցի՝ ռինգում հաղթում է նա, ով խելացի է:

- Ինչպիսի՞ բոքսմատչիկ է Միրանդան:

- Փնթի: Ամեն միջոցի կդիմի, միայն թե հաղթի:

- Իսկ Ձեզ համար հաղթելն ամենակարեւորը չէ՞:

- Ինտելիգենտ խաղն է ամենակարեւորը, հենց դա էլ օգնեց, որ հաղթեմ:

- Ձեր մասին գերմանացի մասնագետներն ասում են, թե ռինգում նախ լավ վերլուծում եք մրցակցի խաղառոճը: Սպասո՞ւմ էիք, որ Միրանդան նման վայրագ խաղ ցույց կտար:

- Նրանից ամեն բան էլ սպասում էի: Ոչ այդ ասիճանի՝ իհարկե:

- Ասում եք՝ հետո փոխեցիք տակտիկան: Ի՞նչ է դա նշանակում:

- Սկզբում որոշել էի նոկաուտով հաղթել նրան: Վնասվածքից հետո սկսեցի ռինգում ավելի շատ ման գալ, խուսափելով դեմիս հասցվելիք հնարավոր հարվածներից:

- Նախքան մրցամարտն ասել էիք, թե Միրանդային ստիպված կլինեք 3 անգամ տեսնել՝ կշռվելիս, ռինգում եւ հիվանդանոցում: Բայց հիվանդանոց Ձե՞զ տարան:

- Ճիշտ է, բայց կարեւորն այն է, որ ես հաղթանակած էի հիվանդանոցում:

Իսկ Միրանդային նրա մենեջերները հազիվ կարողացան փախցնել՝ դահլիճը չսիրեց նրան, շատերն էին թքում, շատեր նետում նրա վրա:

- Երբ դիտեցիք խաղի տեսագրությունը, ի՞նչ ցանկություն առաջացավ:

- Նորից ռինգում լինելու ու մրցելու Միրանդայի հետ:

- Մինչեւ Միրանդայի դեմ մարտն էլ Հայաստանում, կարծում եմ, ազգային հերոսի «կարգավիճակում» էիք: Երկրորդ շաբաթն է արդեն հերոս բառը Ձեր անվանը կից է թե՛ գերմանական, թե՛ ամերիկյան մամուլում:

- Վատ բան չի, թող գրեն:

- Նախորդ մրցելույթներից մեկը նվիրեցիք Ղարաբաղում զոհված տղաների հիշատակին, այս անգամ Արարատն էիք նկարում: Ձեր հաղթականության դեմ թուրքերը չե՞ն բողոքում:

- Մի անգամ էլ ապրիլի 24-ն եմ հիշատակել: Մինչեւ հիմա ոչ մի բողոք չեմ լսել:

- Միրանդայի դեմ հաղթանակն ո՞ւմ էր նվիրված:

- Մայրիկիս 50-ամյակին: Նրան ասել էի, որ իր նվերը ռինգում կստանա:

- Շատ «ծանր» նվեր չէ՞ր:

- Մայրս Գերմանիայում էր, մրցամարտին մեր հարազատների հետ հետեւում էր հեռուստացույցով: 4-րդ ռաունդից լաց է եղել, նրան չեն թույլ տվել, որ դիտի խաղը:

- Ձեր եղբայր Ալեքսանդրը հեռուստաթերից ասաց՝ այդ պահին ի՞մ արյունն էր հոսում:

- Ճիշտ է ասում, եղբոր սիրտն ուրիշ է: Երբ ինքն է ռինգում, ի՛մ ձեռքերն են դողում:

- Երկրպագուների ձայները օգնո՞ւմ, թե՞ խանգարում են Ձեզ:

- Նրանց ձայները չեմ լսում: Երբ ռինգ եմ դուրս գալիս, երկու ձայն եմ միայն լսում՝ մարզչիս ու եղբորս: Իսկ նրանք ինձ շատ են օգնում:

- Լրագրողները Ձեր մարզչին շատ մեղադրեցին:

- Հրաշալի մարզիչ ունեմ: Ռինգում ինձ 100 անգամ հարցրեցին՝ պատասխանս մեկն էր՝ ուզում եմ շարունակել: Մարզիչս էլ նույն կարծիքին էր՝ նա ամենալավն է ինձ ճանաչում: Հայկական դաստիարակություն է՝ կյանքում պարտություն չեմ սիրում:

- Վերջերս Դում ԳԴՀ քաղաքացիություն ստացաք: ՀՀ քաղաքացի լինելով Դում աշխարհի չեմպիոն դարձաք: Ինչո՞ւ փոխեցիք Ձեր քաղաքացիությունը:

- Գերմանիան ինձ դարձրեց աշխարհի չեմպիոն: Լավ մարզիչ, լավ մենեջեր այստեղ ունեցա:

- Եթե Հայաստանում մնայիք, աշխարհի չեմպիոն չէի՞ք լինի:

- Ոչ:

- Ինչպե՞ս, ինչո՞ւ ընտրեցիք բոքսմատչը:

- Հեռուստացույցով շատ էի դիտում: Տեսնում էի ինչպես են դառնում աշխարհի չեմպիոն, ինձ դա ոգեւորեց: Որոշեցի դառնալ ու դարձա: Իսկ կյանքում մինչեւ նպատակիս չհասնեմ, չեմ հանգստանա:

- Դում աշխարհի չեմպիոն եք արդեն: Ինչի՞ եք ձգտում հիմա:

- Աշխարհի չեմպիոնի 4 գոտիներից մեկն ունեմ, ուզում եմ չորսին էլ տիրանալ:

- Ինչո՞ւ Ավետիք Աբրահամյանը դարձավ Արթուր Աբրահամ:

- Որ գերմանացիներն անունս հետս հիշեն: Մտերիմներիս համար Ավետիք եմ, ինձ «չճանաչողների» համար՝ Արթուր Աբրահամ:

- Ձեզ հաճախ այսպես են ներկայացնում՝ ծագում է Հայաստանից, բայց վաղուց նրա հայրենիքը Բեռլինն է:

- Բեռլինում ապրում եմ, իսկ Հայաստանը իմ միակ հայրենիքն է:

- Ո՞վ է Ձեր սիրած բոքսմատչիկը:

- Երիտասարդ Թայսոնը:

- Ո՞ն է սիրելի՝ թզուկի գլխարկը, թե՞ թագը:

- Երեւի թագը:

- Նախորդ օրը գերմանական ԲՌ-ի եթերից ասացիք, թե ուզում եք 3 տղա ունենալ: Ո՞վ է, ինչպիսի՞ն է կամ պիտի լինի աշխարհի չեմպիոնի հարսնացուն:

- Հարսնացու դեռ չունեմ: Բայց կուզենամ այնպիսին լինի, որ բոլորը հարգեն: Հայ ընտանիքի աղջիկ լինի, որ երեխաներս հայ լինեն: Այո, երեք տղա եմ ուզում ունենալ: Մեկը քաղաքագետ թող դառնա, մյուսը սպորտսն ընտրի, երրորդն ազատ է՝ ինչ ուզում է, թող դառնա:

- Ձեզ բժիշկները հեղուկ սննդանյութ են նշանակել: Իսկ ընդհանրապես ինչ եք սիրում ուտել, խմել, չեմպիոնին ինչն է ուժ տալիս:

- Հիվանդանոցում 35 տեսակի ապուր կար: Բանջարեղենով ու կարտոֆիլով ապուրն ամենաշատը դուր եկավ: Իսկ ընդհանրապես ամենաշատը սթեյք ու սպագետի եմ ուտում: Բայց իհարկե, բոլորը գիտեն՝ մրցելույթից հետո իմ սիրած ճաշատեսակը՝ տապակած կարտոֆիլն անպայման պիտի ուտեմ: Եղբայրս էլ, ես էլ ոչ ծխում, ոչ խմում ենք: Գարեջուր ու սուրճ էլ չենք խմում:

- Գերմանիայում տարբեր ընկերություններ եք գովազդում: Հայաստանում, նկատել եմ, Յունիբանկը: Ինչո՞ւ:

- Եթե չվստահեմ, չեմ գովազդի: Ճանաչում եմ՝ լուրջ բանկ է:

- Ինչ կուզենայիք հաղորդել Հայաստանում եւ սփյուռքում ապրող մեր ընթերցողներին, Ձեր հայրենակիցներին, երկրպագուներին, ովքեր մտահոգ են Ձեր առողջությամբ:

- Բոլորին մաղթում եմ առողջություն: Իսկ ես գոնե մի տոկոսով կաշխատեմ ուրախացնել հայրենակիցներիս, երկրպագուներիս:

ԼՈՒՍԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

ՀԱԽՄԱՍ

Կանանց մրցաշարում եռիշխանություն է

Շախմատի աշխարհի մինչեւ 20 տարեկանների առաջնությունում արդեն կայացել է 7 տուր: Տղամարդկանց մրցաշարում աղյուսակը 6 միավորով գլխավորում է ուկրաինացի Յուրի Կրիվորուչկոն: 5,5-ական միավորով հաջորդ տեղերում են վրացի շախմատիստ Լեւան Պանցուլայան եւ ռուսաստանցիներ Նիկիտա Վիտյուգովը եւ Դմիտրի Ֆրոլյանովը: Հայ շախմատիստներից առայժմ բոլորից հաջող է հանդես գալիս Արման Փաշիկյանը, որն ունի 5 միավոր:

Կանանց մրցաշարում եռիշխանություն է: 5,5-ական միավորով աղյուսակը գլխավորում են վրացի շախմատիստուհի Սալոմե Մելիան, Մոնղոլիայի ներկայացուցիչ Բատույագ Մոնգոնտուլը եւ հնդիկ գրոսմայստեր Շահդեւ Տանիան: ԱՄՆ-ում բնակվող Տաթեւ Աբրահամյանը ոչ-ոքի ավարտելով պարտիան, առաջատարներից հետ է մնում կես միավորով: Հայաստանցի շախմատիստուհիներից լավագույն արդյունք ունի հանրապետության ներկայիս չեմպիոնուհի Սիրանուշ Անդրեասյանը, որի հաշվին գրանցված է 4 միավոր:

Սիրողական թիմերի մրցաշարը ծառայեց նպատակին

Սեպտեմբերի 20-ից հոկտեմբերի 7-ը ֆուտբոլի Հայաստանի ֆեդերացիայի ֆուտզալի բաժանմունքի նախաձեռնությամբ անցկացվեց մարզաձեւի սիրողական թիմերի առաջնություն: Մրցասպարեզ էին դուրս եկել «Պոլիտեխնիկ-1-ը», «Պոլիտեխնիկ-2-ը» (պատանիներ), «Ամիկը», ԵՊՀ-ն, «Սինոփսիսը», «Արբենդ» կազմակերպության «Մեդոֆֆ» թիմը եւ Կենտրոնական բանկի թիմը:

«Միկայի» մարզադահլիճում անցկացված մրցումներն անցան բավական հետաքրքրական մրցավեճում: Մեկ շրջանով անցկացված մրցաշարի նպատակն էր ֆուտզալի հետագա պրոպագանդումը: Հատկանշական է, որ մրցումների ավարտից հետո ԵՊՀ-ի թիմը ցանկություն հայտնեց մասնակցելու ֆուտզալի Հայաստանի առաջնությանն ու գավաթի մրցաշարին:

Մրցումներում բոլորից հաջող հանդես եկան «Պոլիտեխնիկ-1» թիմի ֆուտբոլիստները, որոնք հաղթելով բոլոր մրցակիցներին, գրավեցին առաջին տեղը: Մրցանակային 2-րդ տեղը զբաղեցրեց «Ամիկը», որը պարտվել էր միայն առաջատարին: 3-րդը «Մեդոֆֆն» էր, որն իր հերթին զիջել էր 1-ին եւ 2-րդ տեղերը զբաղեցրած թիմերին:

Ինչպես մեր հետ զրույցում նշեց ֆուտզալի բաժանմունքի պետ Գագիկ Վարդանյանը, մրցաշարը ծառայեց նպատակին: Բոլոր մասնակիցները ֆուտզալի ֆեդերացիայի կողմից պարգեւատրվեցին դիպլոմներով, իսկ մրցաշարի լավագույն ֆուտբոլիստն ու լավագույն ռմբարկուն՝ գնդակներով: Ըստ Գագիկ Վարդանյանի, ողջունելի է ՀՀ առաջնությանը մասնակցելու ԵՊՀ-ի թիմի ցանկությունը: Լավ տպավորություն թողեց նաեւ «Մեդոֆֆը»: Ցանկալի կլիներ, որ այս թիմն էլ մասնակցեր Հայաստանի առաջնությանը, որը նախատեսվում է անցկացնել նոյեմբերի 1-ից: Գագիկ Վարդանյանը նաեւ նշեց, որ ցանկալի կլիներ, եթե բարձրագույն եւ առաջին խմբի ակումբները նաեւ ֆուտզալի թիմեր ունենային, ինչն էլ ավելի կնպաստեր մարզաձեւի զարգացմանը եւ պրոպագանդմանը: Առաջիկայում նախատեսվում է անցկացնել Երեւանի առաջնություն սիրողական թիմերի միջեւ:

Վրացիները փորձում են Ռուսաստանին դուրս մղել տարածաշրջանից

Գնահատում է Վահան Հովհաննիսյանը

Ռուս-վրացական հարաբերությունները ռուս-հայկականից ոչ պակաս վաղեմություն ունեն, եւ վրացիները շատ ավելի մոտ են եղել Ռուսաստանին, քան հայերը, գոնե ոտղապահ լինելու փաստարկով: Ներկայում վրացիները հանկարծ հասկացել են, որ Ռուսաստանն այլեւս իրենց նախկին մեծավորությամբ չի ընդունում, որոշ հարցերում նույնչափ չի աջակցում եւ նեղացածություն են դրսեւորում ձգտելով Ռուսաստանին տարածաշրջանից դուրս մղել: Երեկ Մամուլի ազգային ակումբում կարծիք հայտնեց ԱԺ փոխնախագահ Վահան Հովհաննիսյանը, ընդգծելով որ դա ամենեւին շահեկան չէ Հայաստանի համար, որի անկախությունը դեռեւս «ամբողջապես սպառնալիքներից երաշխավորված չէ»: Իսկ մեր հիմնական սպառնալիքը, ի տարբերություն Վրաստանի, Ռուսաստանից չէ, ըստ Հովհաննիսյանի: Մինչդեռ Լեռնային Ղարաբաղի խնդրում հայկական կողմի «զիջողական, զգուշավոր պահվածքը իր լիմիտը սպառելու փուլում է» եւ ժամանակն է դրանից հրաժարվելու, ԱԺ փոխնախագահի կարծիքով:

Բռնությունը գեներալի հանդեպ՝ այլանդակ երեւույթ

Վերջին օրերին Հայաստանում հաճախացած սպանությունները, դրանց փորձերը, հարձակումներն ու բռնությունները իշխանությունների կողմից իրավիճակը չվերահսկելու աղացույցներ չեն, ըստ ՀՀ ԱԺ փոխնախագահ Վահան Հովհաննիսյանի. «Մեզանում միշտ էլ նախընտրական փուլերում վիճակը լարվում է, գնում է ազդեցությունների, ոլորտների բաժանման սկզբում ընդհատակյա, հետո՝ բացահայտ գործընթաց, որում որոշ անդաստիարակ տարրեր դրսեւորում են իրենց՝ խախտելով օրենքը»:

Դեռեւս վերջին նմանատիպ դրսեւորումը ՀՀ ՆԳ նախկին նախարար, Երեւանի նախկին քաղաքապետ, «Հանրապետություն» կուսակցության քաղխորհրդի անդամ Սուրեն Աբրահամյանի նկատմամբ կիրակի առավոտյան գործադրված բռնությունը Վահան Հովհաննիսյանը, բնականաբար, այլանդակ համարեց, «որովհետեւ Սուրեն Աբրահամյանը քաղաքական գործիչ է, եւ բռնությունը նրա քաղաքական գործունեության հետ է կապվում: Սա ոչ միայն ընդունելի չէ, սա դատապարտելի է եւ պետք է վերացնել մեր կյանքից ընդհանրապես»: Վերջինի իրականացմանը, Հովհաննիսյանի համոզմամբ, կնպաստի «Թիկնազորային գործունեության մասին» ՀՅԴ ներկայացրած օրինագծի ընդունումը. «Այսօր սխալմամբ թիկնապահ են անվանում սափրագլուխներին: Սրանք իրականության մեջ թիկնապահ չեն, այլ մկաններով, գուցե նաեւ հրազենով զինված էսկորտ եւ իրականացնում են ֆունկցիա, որի իրավունքը չունեն»: Սուրեն Աբրահամյանի հանդեպ բռնություն գործադրելու առնչությամբ ԱԺ փոխնախագահը նկատեց. «Իհարկե, աղացուցված համարել չի կարելի, բայց ենթադրվում է, որ ինչ-որ մեկի շախմբից են: Առնվազն ինքը՝ պարոն Աբրահամյանը, այդ ենթադրությունն արել է: Ես չեմ կարող ուղղակի հասցե նշել, թե սրանք ում շախմբի մարդիկ կարող էին լինել: Եվ ընդհանրապես արդյոք սա ինչ-որ մարդկանց փորձ չէ՞ ցույց տալ իրենց հավատարմությունը, գերհավատարմությունը, նույնիսկ առանց հրամանի»:

«Էն մի ախպորը ներելը» նախադեպ կարող է դառնալ

Հոկտեմբերի 8-ին զենքի գործադրմամբ խուլիգանություն կատարելու մեղադրանքով ձերբակալված ԱԺ պատգամավոր Հակոբ Հակոբյանին ՀՅԴ-ն Վահան Հովհաննիսյանի հավաստմամբ ոչ մեղադրում, ոչ էլ արդարացնում է, քանի որ իրեն ոչ դատավորի, ոչ էլ դատախազի իրավասություն չի վերապահում. «Հակոբ Հակոբյանի դեմ ոչինչ չունենք, բայց եթե սա փորձ է՝ Հայաստանում անպատժելիության մթնոլորտը վերջապես վերացնելու, կոտրելու եւ օրենքը դարձնելու հավասար բոլորի համար, ապա դա ողջունելի է»: Վահան Հովհաննիսյանի գնահատմամբ, լավ չէ, որ մինչ Հակոբ Հակոբյանը շատ այլք, ովքեր ձերբակալված պատգամավորից առանձնապես ոչնչով ավել-պակաս չեն, կարողացել են օրենքի խստությունից խուսափել եւ դա նախադեպ դառնալն անընդունելի կլինի. «Եթե էն մեր ախպորը ներել ենք, եկեք էս մեր ախպորն էլ ներենք»:

ՀՅԴ-ն գիտի ինչ է անում

«Այլ ասյաններն խորհուրդ տալու համար ռոճիկ սպացողները» լիազորված չեն ՀՅԴ-ին խորհուրդ տալու: Սա Վահան Հովհաննիսյանի պատասխանն է ՀՀ նախագահի խորհրդական Վահրամ Ներսիսյանցի երեկ հնչեցրած հայտարարությանը, թե ՀՅԴ-ն շեղվել է սոցիալիստական կուսակցության ուղուց եւ ավելի շատ լիբերալ է: Վահան Հովհաննիսյանն այնուամենայնիվ ասվածում ճշմարտության մաս տեսնում է, ՀՅԴ-ն գուցեեւ ձախ ուղղվածություն ունեցող կուսակցությանը ոչ բնորոշ քայլերը բացատրելով նրանով, որ «աղխաս երկրում անհապաղ եւ արագ սոցիալիզմ կառուցելը անխուսափելիորեն բերում է բոլշեւիզմի»: Իսկ սոցիալական ճիշտ համակարգ ներդնելու համար որոշ ազդեցությունների ժամանակը միայն տնտեսական զարգացման որոշակի մակարդակին պիտի հաջորդի «սակայն ոչ այն աստիճանի, որ անում էր Բագրատյանը եւ ոչ այն աստիճանի, որ անում է ներկայիս կառավարությունը»: Եվ հետո ՀՅԴ-ի համար այս կամ այն գործչի կամ պետական պատշոնյայի ասածը հիմք չէ: ՀՅԴ-ն հիմք է ընդունել կառավարության քառամյա ծրագիրը, հայտարարեց ՀՅԴ բյուրոյի անդամ Վահան Հովհաննիսյանը:

Ի պատասխան լրագրողի հարցին, թե ՀՅԴ ներսում կա՞ն կրիտիկական ուժեր, նկատի առնելով կուսակցության խորհրդարանական խմբակցության ղեկավար, Արագածոտնի նախկին մարզպետ Հրայր Կարապետյանի կոռումպացված լինելու շուրջը տարբեր հայտարարությունները, Վահան Հովհաննիսյանը հայտարարեց. «Ոչ մի քաղաքական կուսակցություն երաշխավորված լինել չի կարող, որ իր անդամներից մեկը այս կամ այն քրեական կամ կոռուպցիոն հանցանքի մեջ խառնված լինի: Բայց դրա կոնկրետ անուն տվեցիք, եւ կոնկրետ անվան վերաբերյալ ես ասում եմ, որ դա հերյուրանք է եւ սուտ»:

2008-ի նախագահական ընտրություններին ՀՅԴ-ն սեփական թեկնածուով է հանդես գալու, Հովհաննիսյանի վստահեցումն էր ի պատասխան լրագրողի հարցին, թե նշյալ ընտրություններում երկու անուն լինի՝ Ռոբերտ Քոչարյան եւ Սերժ Սարգսյան, ապա ՀՅԴ-ն ո՞ւմ թեկնածությունը կպաշտպանի:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 12-ին, ժամը 15-ին Հայաստանի գրողների միության մեծ դահլիճում տեղի կունենա բանաստեղծ, թարգմանիչ

Վահե Գոդելի (Շվեյցարիա)

ծննդյան 75-ամյակին նվիրված ցերեկույթ:

Հայաստանի գրողների միություն

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների հաշվառմամբ, ծանուցվում է **ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանին** որոշման նպատակով ստորերկրյա ջրային օբյեկտից 45,0 լ/վրկ ջրառի թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են ափսեանշային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-դ տուն, 5-դ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2006 թ. հոկտեմբերի 17-ին, ժամը 16-00, Կառավարական 3-դ տուն, 5-դ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալություն

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների հաշվառմամբ, ծանուցվում է **ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանին** որոշման նպատակով ստորերկրյա ջրային օբյեկտից 45,0 լ/վրկ ջրառի թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են ափսեանշային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-դ տուն, 5-դ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2006 թ. հոկտեմբերի 17-ին, ժամը 16-00, Կառավարական 3-դ տուն, 5-դ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալություն

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների հաշվառմամբ, ծանուցվում է **ՀՀ Արարատի մարզի Արարատի քաղաքապետարանին** որոշման նպատակով ստորերկրյա ջրային օբյեկտից 3,6 լ/վրկ ջրառի թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են ափսեանշային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-դ տուն, 5-դ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2006 թ. հոկտեմբերի 18-ին, ժամը 16-00, Կառավարական 3-դ տուն, 5-դ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալություն

246-999
516-999
Elite
100 TAXI SERVICE 24
1-6 կմ - 600դ. ԱՌԱՆՑ ՆՍՏԵԼԱՎԱՐՔԻ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների հաշվառմամբ, ծանուցվում է **ՀՀ Արարատի մարզի էջմիածնի հաղթում գործող «էջմիածնի պահածոների գործարան» ԲԲԸ-ի** խմելու-սնեսական եւ արտադրական նպատակներով ստորերկրյա ջրային օբյեկտից 11,6 լ/վրկ ջրառի թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են ափսեանշային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-դ տուն, 5-դ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2006 թ. հոկտեմբերի 19-ին, ժամը 16-00, Կառավարական 3-դ տուն, 5-դ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալություն

ՄԱՍԵՐԻՑՈՒՄ

ՄԱՀԱՑԴ

Աբրահամյանների ընտանիքը խորին կսկիծով գուժում է մահը սիրելի մոր՝

Պայծառ Կարապետի Աբրահամյանի,

որ պատահեց հոկտեմբերի 9-ին, Փարիզի հիվանդանոցներից մեկում:

Հոգեհանգիստը տեղի կունենա **հոկտեմբերի 11-ին, ժամը 17-ին,** Վայոց ձորի մարզի Մալիշկա գյուղում:

Թաղման արարողությունը՝ **հոկտեմբերի 12-ին, ժամը 13-ին,** նույն վայրում: Մինչ այդ, **ժամը 11.30-ից,** վերջին հրաժեշտը՝ Մալիշկայի Սբ. Աննա եկեղեցում:

Մրցույթի հրավեր

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը ՄԱԶԾ/ԳԷՖ «Հայաստան. քաղաքային ջեռուցման եւ տաք ջրամատակարարման էներգաարդյունաբերության բարձրացում» ծրագրի շրջանակներում հրավիրում է որակյալ կազմակերպություններին մասնակցելու մրցույթին եւ ներկայացնելու գնահատական «Մասնագիտական ծառայությունների մատուցում «Ուղղակի չափումներ, մոնիտորինգի իրականացում, քաղաքային եւ ներբնակային օդի որակի վրա ազդեցության հետագա գնահատում Երեւան եւ Գյումրի քաղաքներում 2006-2007թթ ջեռուցման սեզոնների ընթացքում»

Հետաքրքրված ընկերություններն ու կազմակերպությունները կարող են հավելյալ տեղեկություններ եւ մրցույթի պայմանների ամբողջական փաթեթն ստանալ հետեւյալ հասցեով երկուշաբթիից ուրբաթ, ժամը 15:00 - 17:00.

Միավորված ազգերի կազմակերպության Հայաստանի գրասենյակ
Երեւան 0010, Պետրոս Ադամյանի 14
Հեռախոս. 56-60-73 (ուղիղ 126 կամ 119)
Դիմել Գայանե Թովմասյանին (գնումների հարցերով պատասխանատու)

Առաջարկները պետք է ներկայացվեն վերոնշյալ գրասենյակ մինչեւ 2006 թ. հոկտեմբերի 21-ը, ժամը 18:00: Ուշացած առաջարկները չեն ընդունվի:

Հայաստանի ամերիկյան համալսարան
Քաղաքագիտության եւ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ

Թոմաս Քարոթերը ներկայացնում է
Ժողովրդավարությունն առաջ է ընթանում, թե՞ նահանջում է ներկայիս ափխարհում
Դասախոսություն
Ուրբաթ, Հոկտեմբերի 13-ին, ժամը 18:00-ին

Պարոն Թոմաս Քարոթերը «Միջազգային խաղաղության Քարնեգի Նվիրատվություն» (Վաշինգտոն) կազմակերպության Միջազգային հարաբերությունների եւ կառավարման բաժնի փոխնախագահն է: Նա վերահսկում է այս կազմակերպության ծրագրերը եւ ղեկավարում «Ժողովրդավարություն եւ օրենքի գերակայություն» ծրագիրը, որը իրականացնում է ափխարհի տարբեր երկրներում ժողովրդավարության իրավիճակի արդյունավետ հետազոտություն: Ժողովրդավարությունն ամենուրեք լայնորեն ճանաչված լինելով որպես միջազգային առաջատար հերթնակություն՝ նա ափխատել է բազմաթիվ հասարակական եւ մասնավոր կազմակերպություններում ժողովրդավարությանն աջակցող ծրագրերում եւ իրականացրել է լայնածավալ հետազոտություններ ժողովրդավարությանը նպաստող ծրագրերի վերաբերյալ Արեւելյան Եվրոպայի, Նախկին խորհրդային Միության, Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի, Մերձավոր Արեւելքի եւ Ասիայի երկրներում: Պարոն Քարոթերը նաեւ ունի զգալի փորձ՝ առնչվող զարգացման, մարդու իրավունքների, հասարակական հաղորդակցության, միջազգային կառույցների եւ արտաքին քաղաքական օգնության բնագավառներին: Նա ժողովրդավարության խթանմանը վերաբերող մի խումբ կարեւոր գրքերի հեղինակ է, ներառյալ տուսով լույս տեսնող «Դեմ առ դեմ աշխարհում. օգնել նոր ժողովրդավարական երկրների քաղաքական կուսակցություններին» գիրը: Նա նաեւ հայտնի միջազգային ամսագրերում տպագրված բազմաթիվ հոդվածների հեղինակ է: Պարոն Քարոթերը Կենտրոնական եվրոպական համալսարանի (Բուդապեշտ) իրավաբանության ֆակուլտետի դասախոս է: Նա Հանրապետական զարգացման կենտրոնի, Բաց հասարակության ինստիտուտի, ինչպես նաեւ ժողովրդավարություն կազմակերպության խորհրդատվական մարմինների անդամ է: Պարոն Քարոթերը Հարվարդի իրավաբանական համալսարանի եւ Լոնդոնի տնտեսագիտության համալսարանի շրջանավարտ է: Պարոն Քարոթերը Հայաստանում է Բաց հասարակության ինստիտուտի հայաստանյան հիմնադրամի հրավերով:

Մուտքն ազատ է
Հայաստանի ամերիկյան համալսարան, Փոքր դահլիճ (5-րդ հարկ)
Դասախոսությունը կընթանա անգլերենով՝ հայերեն համընթաց թարգմանությամբ
Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 51 26 77

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների հաշվառմամբ, ծանուցվում է **ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքին** որոշման նպատակով ստորերկրյա ջրային օբյեկտից 433 լ/վրկ ջրառի թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են ափսեանշային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-դ տուն, 5-դ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2006 թ. հոկտեմբերի 18-ին, ժամը 16-00, Կառավարական 3-դ տուն, 5-դ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալություն

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՍՑԵ ՅԱՆԵՔՍՇԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 10.10.2006, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Գինդ» տպագրատանը: